ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀՀ կրթության և գիտության նախարարի
2012թ.20.01 N 39-Ա/Ք հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

<<ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>>

ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ

(6-9-**րդ դասարաններ**)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

<<ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>>

ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

(6-9-**րդ դասարաններ**)

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

<<Հայոց պատմություն>> առարկայի հիմնական դպրոցի չափորոշչի մշակման համար հիմք են ծառայել <<Կրթության մասին>> և <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքները, Հանրակրթության պետական չափորոշչի հայեցակարգային դրույթները, սկզբունքներն ու պահանջները:

Հայոց պատմության չափորոշիչը ներառում է՝

- առարկայի հայեցակարգը,
- առարկայի ուսումնական նպատակները,
- առարկայի բովանդակային պարտադիր միջուկը,
- ուսումնական գործունեության տեսակները,
- սովորողների պատրաստվածությանը (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) ներկայացվող պահանջների և արժեքային համակարգի նկարագրությունները, ընդ որում՝ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերաբերող պահանջները ներկայացված են երեք՝ Ա, Բ, Գ մակարդակներով, որոնք համապատասխանում են՝ Ա - նվազագույն, Բ - միջին, Գ - բարձր պատրաստվածությանը,
- գրականության ցանկը:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Հայոց անկախ պետականության վերականգնումը շրջադարձային նշանակություն ունեցավ ազգային կրթական համակարգի ձևավորման և զարգացման առումով: Անհրաժեշտություն առաջացավ հանրակրթական դպրոցում ամրագրել հայագիտական առարկաների տեղն ու դերը, դրանց ուսումնական և դաստիարակչական ընդգրկվածության և բովանդակային հարցերը: Այս համատեքստում առանձնակի նշանակություն ուներ Հայոց պատմության նոր ծրագրերի, դասագրքերի ստեղծումը, քանզի հայոց լեզվի և հայ գրականության հետ միասին Հայոց պատմությունը հանդիսանում է հայագիտական առարկաների առանցքային հենքը, ինչպես նաև հանրակրթության բովանդակության առաջնային բաղադրիչներից մեկը: Այս առաջնահերթություններով պայմանավորված մշակվել է Հայոց պատմության չափորոշիչը:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն՝ նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը:

Բնականաբար նման առանձնահատուկ նշանակություն ունի սեփական պատմությունը նաև հայ ժողովրդի համար: Հայոց պատմության իմացության միջոցով է հիմնականում ձևավորվում հայի ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, նրա միջոցով է աճող սերունդը հաղորդակցվում իր ժողովրդի անցյալին, պատմամշակութային ժառանգությանը: Միաժամանակ, սեփական պատմության իմացությունը հնարավորություն է տալիս իրականացնելու ազգային նպատակները, պահպանելու և ապահովելու հայի, որպես տեսակի, շարունակականությունը: Հայոց պատմությունը բովանդակում է նաև դաստիարակչական վիթխարի ներուժ՝ աճող սերնդի համար հանդիսանալով հայրենասիրության, անձնուրաց պայքարի և ազգային արժանապատվության ապացույցների անսպառ աղբյուր:

Հայաստանը հին ժամանակներից սկսած եղել է եվրոպական և արևելյան քաղաքակրթությունների շփման, փոխհաղորդակցության և փոխազդեցության կենտրոնում: Շփվելով տարբեր մշակույթների հետ, կրելով նրանց որոշակի ազդեցությունը, հայ ժողովուրդը, սակայն, պահպանել ու զարգացրել է ինքնատիպ քաղաքակրթություն, որի շնորհիվ հասել է մարդկության պատմության նորագույն փուլին և շարունակում է իր պատմական ընթացքը:

Հայոց պատմության յուրահատուկ գծերից է ազատության և անկախության պահպանման կամ վերականգնման համար մղված դարավոր պայքարը: Ահա թե ինչու առարկայի բովանդակության մեջ մեծ տեղ են զբաղեցնում Հայոց պատմության հերոսական էջերը,

ազգային-ազատագրական պայքարի նախորդ և նորագույն փուլերը: Անտարակույս, Հայաստանի՝ Հայոց հայրենիքի ազատագրության համար պայքարը մեր ժողովրդի պատմության մշտական ուղեկիցն է, նրա գոյության ձևերից մեկը:

Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացիներին ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայկական քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել ազատության ու բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Զինվելով պատմաքաղաքական փորձով և լավատեսությամբ՝ այսօրվա սովորողները շարունակելու են կերտել ու զարգացնել հայրենիքի հարատևման և ծաղկման ամուր հիմքերը:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հայոց պատմության հանրակրթական առարկայի գլխավոր նպատակը պատմական գիտելիքներով զինված, ազգային ինքնագիտակցությամբ օժտված, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող, ազգային նկարագիր ունեցող հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է:

Այս առաջնահերթ նպատակից բխում են հետևյալ հիմնական խնդիրները.

- սովորողին հաղորդակից դարձնել նախորդ սերունդների ստեղծած հոգևոր-մշակութային արժեքներին,
- ցույց տալ Հայաստանի և հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության տեղը և դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ,
- ծանոթանալ և իմանալ սեփական ակունքները, ժողովրդի պատմական ընթացքը ժամանակի հոլովույթում,
- օգնել հասկանալու պատմական իրադարձությունները, երևույթները և դասեր քաղել պատմությունից,
- ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ, ինչը կնպաստի պատմական ժառանգականության ընկալմանը և պատմական փորձի յուրացմանը ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցմանը,
- ամբողջացնել և համակարգել հայագիտական առարկաներից սովորողների ստացած գիտելիքները:

<<ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ
ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԻՋՈՒԿ

<<Հայոց պատմություն>> առարկան բովանդակային առումով ընդգրկում է Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունն ամբողջականորեն՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Մեր ժողովրդի անցած պատմական ուղու ամբողջական, համակարգված և հանրամատչելի շարադրանքը սովորողներին կծանոթացնի հազարամյակների կեն-սագրություն ունեցող հայկական քաղաքակրթության հետ, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի ունեցած դժվարություններին ու կորուստներին:

ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԻՆ ՇՐՋԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: <<Հայոց պատմություն>> առարկայի բովանդակությունը, պարբերացումը: Հնագույն և հին շրջանների պատմության առանձնահատկությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայոց հայրենիքը: Հայկական լեռնաշխարհը՝ հայերի հայրենիք: Հայկական լեռնաշխարհի դիրքը, սահմանները, գետերը, լճերը: Հայաստանի պատմավարչական բաժանումը:

Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության հնագույն բնօրրան: Նախնադարի պարբերացումը: Հայաստանի տարածքի նախնադարյան բնակատեղիները (Գուգարք, Պորտաբլուր, Շենգավիթ, Լճաշեն): Նախնադարյան հասարակության զարգացումը (տոհմ, ցեղ, ցեղային միություններ): Նախնադարյան մարդկանց նյութական և հոգևոր ձեռքբերումները (կրակի օգտագործումը, աշխատանքային գործիքների կատարելագործումը, արվեստ, կրոնական պատկերացումներ): Նախնադարյան հասարակության անկումը:

Վաղ պետական կազմավորումները Հայաստանի տարածքում: Հայաստանը հնդեվրոպական նախահայրենիք: Վաղ պետական կազմավորումների առաջացումը. Արատտա, Հայասա, Հայկյաններ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Վանի համահայկական թագավորությունը: Վանի թագավորության հիմնադրումն ու հզորացումը: Վանի թագավորության թուլացումն ու անկումը:

Հայկազունի Երվանդակաների թագավորությունը: Պարույր Նահապետը Հայոց թագավոր: Երվանդ I Սակավակյաց: Տիգրան I Երվանդյան: Ք.ա. 522-521 թթ. հակապարս-կական ապստամբությունը: Հայաստանը Աքեմենյան տերության կազմում:

Երվանդական թագավորության վերականգնումը. Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանը: Հայկական թագավորությունները Ք.ա III դարում: Հայկական թագավորությունները և Սելևկյանները:

Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորությունը: Հայկական թագավորությունների անկախացումը: Արտաշես I-ը և հայկական հողերի միավորումը: Արտաշես I-ի բարենորոգումները:

Հայաստանը աշխարհակալ տերություն: Տիգրան II-ի գահակալումը: Տիգրան II Մեծի նվաճումները: Տերության տարածքը և բնակչությունը: Հայ-հռոմեական պատերազմը: Արտաշատի հաշտության պայմանագիրը:

Մեծ Հայքի թագավորությունն Արտավազդ II-ի օրոք: Կրասոսի և Անտոնիոսի արշավանքները: Արտաշես II: Արտաշեսյան վերջին գահակալները:

Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը *(I-III* ***դարեր****):* Արշակունյաց արքայատոհմի հաստատումը Հայաստանում: Վաղարշ I, Վաղարշապատ մայրաքաղաքի կառուցումը: Վաղարշ II-ը և Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը: Սասանյան հեղաշրջումը Պարսկաստանում և հայ-պարսկական հարաբերությունները: Տրդատ III Մեծ: Մծբինի 40-ամյա հաշտությունը:

Հին Հայաստանի պետական կարգը, տնտեսությունը և սոցիալական կառուցվածքը*:* Պետական կարգը: Տնտեսությունը (գյուղատնտեսություն, արհեստներ, ներքին և արտաքին առևտուր): Բնակչությունը, քաղաքները, գյուղական համայնքը:

Հին Հայաստանի մշակույթը:

Հայկական մշակույթի ակունքները: Առասպելները և վիպերգերը: Դիցարանը: Գիրը: Գիտությունը: Արվեստը, ճարտարապետությունը:

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: Հայոց պատմության միջնադարյան շրջանի բովանդակությունը, առանձնահատկությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Ավատատիրության հաստատումը Հայաստանում*:* Ավատատիրություն ձևավորումը, աստիճանակարգությունը: Ազատների և անազատների դասերը: Պետական կառավարման համակարգը:

Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն*:* Քաղաքական կացությունը Առաջավոր Ասիայում: Տրդատ III Մեծ և Գրիգոր Լուսավորիչ: Քրիստոնեությունը Հայաստանի պետական կրոն:

Պայքար թագավորական իշխանության ամրապնդման համար*:* Թագավորական իշխանության ամրապնդման քաղաքականությունը: Խոսրով Կոտակ, Արշակ II, Պապ թագավոր: Մեծ Հայքի թագավորության թուլացումը: Խոսրով IV, Վռամշապուհ: Թագավորության անկումը:

Ազատագրական շարժումները *V* ***դարում****:* Պարսից քաղաքականությունը Հայաստանում: Վարդանանց պատերազմը. Ավարայրի ճակատամարտը: Վահանանց ապստամբությունը. Ակոռիի և Ներսեհապատի ճակատամարտերը: Նվարսակի պայմանագիրը:

Հայաստանը *VI - IX* ***դարերում****:* Արևմտյան Հայաստանը VI դարում, հակաբյուզանդական ելույթները և ապստամբությունները: Արևելյան Հայաստանը VI դարում, 571 – 572 թթ. ապստամբությունը: Պարսկա - բյուզանդական պատերազմը և Հայաստանը:

Արաբական արշավանքները և Հայաստանը: Թեոդորոս Ռշտունին և հայ-արաբական պայմանագիրը: Հայաստանը Արաբական խալիֆայության կազմում: Հակաարաբական ապստամբությունները (703 թ., 774 - 775 թթ., 850 - 855 թթ.):

Հայկական մշակույթը *V - IX* ***դարերում****:* Մեսրոպ Մաշտոցը և հայոց այբուբենի ստեղծումը: Դպրոցը: Պատմագրությունը: Փիլիսոփայությունը: Բնական գիտությունները: Գրականությունը: Արվեստը, ճարտարապետությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Հայաստանի Բագրատունյաց թագավորությունը: Հայաստանի անկախության վերականգնումը. Աշոտ I, Սմբատ I: Երկրի անկախության ամրապնդումը և հզորացումը. Աշոտ II Երկաթ, Աշոտ III Ողորմած, Գագիկ I: Անիի թագավորության թուլացումը: Գագիկ II, թագավորության անկումը: Վասպուրականի, Կարսի, Սյունիքի և Լոռու թագավորությունները: Բագրատունյաց թագավորության տնտեսության վերելքը: Պետական կառավարման համակարգը:

Հայ ժողովրդի պայքարը օտարերկրյա զավթիչների դեմ: Զաքարյաններ: Սելջուկթյուրքերը և Հայաստանը: Հայկական թագավորությունները և իշխանությունները: Հայաստանը Զաքարյանների օրոք: Հայաստանը և մոնղոլները: Պայքար հայկական պետականության վերականգնման համար: Հայաստանի քաղաքական իրավիճակը XIV դարում:

Կիլիկյան Հայաստան: Հայերը Կիլիկիայում: Ռուբինյան իշխանության առաջացումը և ամրապնդումը: Թագավորության հռչակումը: Լևոն I արքայի ներքին և արտաքին քաղաքականությունը: Հեթումյան արքայատոհմի հաստատումը: Հեթում I: Հայ-մոնղոլական և հայ-մամլուքյան հարաբերությունները: Կենտրոնական թագավորության թուլացումն ու անկումը: Կիլիկյան Հայաստանի տնտեսությունը: Քաղաքները և քաղաքային կյանքը: Պետական կառավարման համակարգը:

Հայկական մշակույթը *X-XIV* ***դարերում:*** Հայ մշակույթի վերածննդի նախադրյալները: Կրթական գործը: Պատմագրությունը: Իրավագիտությունը: Բնագիտությունը: Գրականությունը: Արվեստը, ճարտարապետությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Հայաստանը *XV* ***դարից մինչև*** *XVII* ***դարի կեսերը:*** Հայաստանի քաղաքական իրավիճակը XV դարում: Կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Էջմիածնում: Կ.Պոլսի Հայոց պատրիարքության ստեղծումը:

Թուրք-պարսկական պատերազմները և Հայաստանը: Շահ Աբասը և հայերի բռնագաղթը: 1639 թ. Կասրե-Շիրինի հաշտության պայմանագիրը:

Հայկական իշխանությունները ուշ միջնադարում: Հայաստանի ազատագրության համար պայքարը:

Հայկական մշակույթը *(XV* ***դար*** *- XVII* ***դարի առաջին կես):*** Հայկական մշակույթի զարգացման պայմանները: Դպրոցը: Տպագրությունը. Հակոբ Մեղապարտ: Գիտությունը: Արվեստը:

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: Հայոց պատմության նոր շրջանի բովանդակությունը, առանձնահատկությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ

Ազատագրական պայքարի նոր փուլը *XVII* ***դարի երկրորդ կեսին և*** *XVIII* ***դարում:*** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի վերելքի նախադրյալները: Էջմիածնի 1677 թ. ժողովը: Իսրայել Օրին և նրա գործունեությունը: Ազատագրական պայքարի սկիզբն Արցախում: Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանությունը: Ազատագրական շարժման ծավալումն Արցախում: Ազատագրական պայքարը Սյունիքում: Դավիթ Բեկ, Մխիթար Սպարապետ: Արցախի և Սյունիքի զինված պայքարի արդյունքները: Հայկական ինքնավա-

ությունն Արցախում (Խամսայի մելիքություններ): Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոնները: Հովսեփ Էմին: Մադրասի խմբակը: Հայաստանի ազատագրության ծրագրերը (Հովսեփ Արղության, Շահամիր Շահամիրյան):

Արևելյան Հայաստանը *XIX* ***դարի առաջին կեսին:*** Քաղաքական կացությունը Անդրկովկասում: 1804 - 1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը: 1826 - 1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը: Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը. պարսկահայերի վերաբնակեցումը: Հայկական մարզը: 1836 թ. եկեղեցական կանոնադրությունը:

Արևմտյան Հայաստանը *XIX* ***դարի առաջին կեսին:*** 1806 - 1812 թթ. ռուս-թուրքական պատերազմը: 1828 - 1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Ադրիանապոլսի պայմանագիրը, արևմտահայերի վերաբնակեցումը:

Հայկական մշակույթը *XVII* ***դարի երկրորդ կեսից մինչև*** *XIX* ***դարի առաջին կեսը:*** Հայկական մշակույթի զարգացման պայմանները և կենտրոնները: Դպրոցները: Տպագրությունը: Հայ պարբերական մամուլի սկզբնավորումը. <<Ազդարար>>: Գիտությունը: Վենետիկի Մխիթարյան միաբանությունը: Արվեստը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հայաստանը Ռուսական և Օսմանյան կայսրությունների կազմում: Բարենորոգումներն Արևելյան Հայաստանում: Արդյունաբերության և ճանապարհաշինության զարգացումը: Ռուսական ինքնակալության ազգային և գաղութային քաղաքականությունը: Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը և վարչական բաժանումը:

Ազգային-հասարակական շարժումները: Հայ հասարակական քաղաքական միտքը: Սահմանադրական շարժումը: Զեյթունի 1862 թ. ապստամբությունը:

1877 - 1878 ***թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցի միջազգայնացումը***: 1877 - 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայերը: Սան Ստեֆանոյի պայմանագիրը և Հայկական հարցը: Բեռլինի վեհաժողովը և Հայկական հարցի միջազգայնացումը:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը XIX **դ.** *70 - 90* ***ական թվականներին:*** Ազատագրական խմբակները և կազմակերպությունները: Հայ ազգային կուսակցությունները (Արմենական, Հնչակյան, Դաշնակցություն): Հայդուկային շարժման առաջացումը և ծավալումը: Արևմտահայության կոտորածները 1890-ական թթ., Հայոց ցեղասպանության սկիզբը: Հայերի ինքնապաշտպանական մարտերը:

Ազատագրական շարժումների ծավալումը *XX* ***դարի սկզբին:*** Առաքելոց վանքի կռիվը: 1904 թ. Սասունի ապստամբությունը: Հայդուկային շարժման անկումը: Ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության նոր դրսևորումը. 1903 թ. հունիսի 12-ի հրամանագիրը: Հայ-թաթարական կռիվները, հայերի ինքնապաշտպանության կազմակերպումը: Հակահամիդյան շարժումը: Երիտթուրքերի 1908թ. պետական հեղաշրջումը: Կիլիկիահայության կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը: Հայկական հարցը 1912 - 1914 թթ.:

Հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտի տարիներին: Հայաստանը Ռուսաստանի և Օսմանյան Թուրքիայի նվաճողական ծրագրերում: Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատը: Հայ կամավորական շարժումը:

Հայոց Մեծ եղեռնը: Ցեղասպանություն հասկացությունը: Հայերի ցեղասպանության երիտթուրքական ծրագիրը և դրա իրագործումը: Մեծ եղեռնի հետևանքները, դասերը:

Ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թվականին, դրանց նշանակությունը:

Հայաստանը 1917 թ. ռուսաստանյան հեղափոխությունների շրջանում: Ցարիզմի տապալումը և նոր իշխանության մարմինների ստեղծումը: Ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը: Արևմտահայերի և արևելահայերի առաջին համագումարները: Հոկտեմբերյան հեղափոխությունը և սահմանների հարցը Անդրկովկասում:

Երզնկայի զինադադարը: Հայկական զորամիավորումների ստեղծումը: Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը, Բրեստ-Լիտովսկի հաշտությունը և հայկական տարածքների հանձնումը Թուրքիային:

Պատերազմի վերսկսումը կովկասյան ճակատում, թուրքերի ներխուժումը Հայաստան և Անդրկովկաս: Հայկական զորքի դիմադրությունը: Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը: Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը:

Հայկական մշակույթը *XIX* ***դարի երկրորդ կեսին և*** *XX* ***դարի սկզբին****:* Մշակույթի զարգացման նախադրյալները: Դպրոցը: Գիտությունը: Մամուլը, գրականությունը: Արվեստը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ

Գաղթավայրերի առաջացումը, հիմնական կենտրոնները: Գաղթավայրերի դերը հայապահպանության և ազգային մշակույթի զարգացման գործում:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: Հայոց պատմության նորագույն շրջանի բովանդակությունը, առանձնահատկությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հանրապետության կայացումը*:* Հայաստանի Հանրապետության հռչակումը: Բաթումի պայմանագիրը: Իշխանության մարմինների և ազգային բանակի ստեղծումը: Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները: Հայկական անկախ պետականության վերականգնման պատմական նշանակությունը:

Հանրապետության սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը*:* Սոցիալ-տնտեսական դրությունը և տնտեսության վերականգնմանն ուղղված միջոցառումները: Քաղաքական կյանքը. կուսակցությունները: Թուրք-թաթարական խռովությունները: 1920 թ. Մայիսյան ապստամբությունը և դրա հետևանքները: Մշակութային կյանքը. Հայաստանի համալսարանի հիմնադրումը, գիտության և մշակույթի գործիչների վերադարձը Հայաստան:

Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը *1918 - 1920* ***թթ****.:* ***Հայկական հարցը****:* Հանրապետության հարաբերությունները Քառյակ միության հետ: Հայ-վրացական հարաբերությունները: Հայ-ադրբեջանական հարաբերությունները: Հայ–ռուսական հարաբերությունները: Արևելքի ժողովուրդների համագումարը: Փարիզի խաղաղության խորհրդաժողովը և Հայկական հարցը: Հայկական հարցը Սան Ռեմոյի խորհրդաժողովում: 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը: Կիլիկիահայությունը 1918-1921թթ:

Հայաստանի Հանրապետության անկումը*:* Քեմալական շարժումը և Հայաստանը: 1920 թ. թուրք–հայկական պատերազմը: Հայաստանի խորհրդայնացումը. 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920 - 1945 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը *1920 - 1922* ***թթ****.:* Խորհրդային վարչակարգի հաստատումը, <<Ռազմական կոմունիզմ>>-ի քաղաքականությունը: Փետրվարյան համաժողովրդական ապստամբությունը: Հայաստանի առաջին Սահմանադրությունը: Անդրկովկասի խորհրդային դաշնային հանրապետության և ԽՍՀՄ-ի ստեղծումը:

Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները *(1920 - 1922 **թթ.**):* 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերը: Նախիջևանի հիմնախնդիրը: Զանգեզուրի հերոսամարտը (1920 թ. վերջ – 1921 թ. հուլիս), Գարեգին Նժդեհ: <<Լոռու չեզոք գոտու>>, Ջավախքի, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրները:

Սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքը Խորհրդային Հայաստանում *1922 - 1941 **թթ.**:* Անցումը Նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ), տնտեսության վերականգնումը: ՀՍԽՀ ինդուստրացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Քաղաքական բռնությունները և հալածանքները: Կոմունիստական ամբողջատիրության հաստատումը, անհատի պաշտամունքը: Խորհրդային Հայաստանը՝ միութենական հանրապետություն, ՀԽՍՀ նոր Սահմանադրությունը:

Հայկական Սփյուռքի ձևավորումը: Սփյուռքի առաջացումը: Հայկական հարցը Լոնդոնի և Լոզանի խորհրդաժողովներում: <<Հայկական օջախի>> և հայ գաղթականության խնդիրը Ազգերի լիգայում, Ֆ. Նանսեն: Հայրենադարձությունը 1920 - 1936 թթ.:

Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Պատերազմի սկիզբը: Հայկական ազգային դիվիզիաների կազմավորումը և նրանց մարտական ուղին: Սփյուռքահայերի մասնակցությունը ֆաշիզմի ջախջախմանը: Հայերի մասնակցությունը պարտիզանական պայքարին: Խորհրդային Միության հայ հերոսները և զորավարները:

Խորհրդային Հայաստանի մշակույթը *(1920 – 1945 **թթ.**):* Խորհրդային իշխանության քաղաքականությունը մշակույթի բնագավառում: Կրթական համակարգի ձևավորումը: ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիմնադրումը և ՀԽՍՀ ԳԱ ստեղծումը: Բնական գիտությունները: Հայագիտությունը: Գրականությունը: Թատրոնը, կինոարվեստը, կերպարվեստը, երաժշտությունը: Քաղաքաշինությունը և ճարտարապետությունը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1945-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայկական Սփյուռքը հետպատերազմյան շրջանում: Հայկական հարցի վերաբացումը միջազգային նոր պայմաններում: <<Մեծ հայրենադարձության>> կազմակերպումը (1946 – 1948 թթ.): Սփյուռքահայերի պայքարը Հայկական հարցի լուծման և ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Հայրենիք - Սփյուռք կապերի բարելավումը և ամրապնդումը:

Տնտեսությունը, հասարակական-քաղաքական կյանքը: Արդյունաբերության վերակառուցումը և զարգացումը: Գյուղատնտեսության հիմնախնդիրները: Բնակչության սոցիալական վիճակը: Քաղաքական բռնությունների նոր փուլը: 1949 թ. զանգվածային աքսորը: ՀԽՍՀ-ն <<խրուշչովյան ձնհալի>> տարիներին: Ազգային զարթոնքը: Խորհրդային Հայաստանը լճացման տարիներին:

Արցախյան շարժումը: Գորբաչովյան <<վերակառուցման քաղաքականությունը>>: Արցախյան շարժման սկզբնավորումը: ՀԽՍՀ և ԽՍՀՄ ղեկավարության դիրքորոշումը: Սումգայիթյան ողբերգությունը: Հայերի բռնագաղթը Ադրբեջանից: 1988 թ. դեկեմբերի 7-ի երկրաշարժը: Համազգային շարժման ծավալումը: Հայկական ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը: Ազատագրական պայքարի զինված փուլը: ԼՂՀ անկախության հռչակումը (1991 թ. սեպտեմբերի 2):

Հայաստանի Հանրապետության անկախության գործընթացը: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990 թ. մայիսի 20-ի ընտրությունները: Հայաստանի անկախության մասին 1990 թ. օգոստոսի 23-ի հռչակագիրը: ԽՍՀՄ-ի փլուզումը, ԱՊՀ-ի ստեղծումը:

Խորհրդային Հայաստանի և Հայկական սփյուռքի մշակույթը *1945 - 1991 **թթ**:*

Կրթական համակարգը: Գիտությունը: Գրականությունը: Արվեստը. երաժշտությունը, թատրոնը, կինոն, կերպարվեստը: Ճարտարապետությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1991 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Հայաստանի Հանրապետության ամրապնդման գործընթացը: 1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեն, ՀՀ անկախության հռչակումը: Իշխանության մարմինների ձևավորումը: Բանակը: Հանրապետության խորհրդանիշները: ՀՀ սահմանադրությունը:

ՀՀ տնտեսական դրությունը, հասարակական-քաղաքական կյանքը: Տնտեսական քաղաքականությունը: Բազմակուսակցական համակարգի ձևավորումը: Հասարակական և բարեգործական կազմակերպությունները: Ներքաղաքական զարգացումները 1991 - 1998 թթ.: 1999 թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը: Ներքաղաքական կյանքը XXI դարի սկզբներին: Մշակութային կյանքը:

ՀՀ միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը: Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը և դիվանագիտական կապերի հաստատումը: ՀՀ-ն ԱՊՀ-ի, ՄԱԿ-ի և Եվրախորհրդի անդամ: ՀՀ - Եվրամիություն հարաբերությունները: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: 1991 թ. դեկտեմբերի 10-ի <<Անկախության մասին հանրաքվեն>>: ԼՂՀ իշխանության մարմինների ստեղծումը, պետական խորհրդանիշները: Ադրբեջանի ագրեսիան ԼՂՀ-ի դեմ, հայկական ուժերի հակահարձակումը: Շուշիի և Լաչինի ազատագրումը: Պատերազմի հետագա ընթացքը, զինադադարի կնքումը (1994 թ. մայիս): Լեռնային Ղարաբաղի հարցի միջազգայնացումը և Մինսկի խմբի գործունեությունը:

Հայկական Սփյուռքը *1991* ***թվականից մինչև մեր օրերը:*** Զանգվածային արտագաղթը և Սփյուռքի ստվարացումը: Սփյուռքի հիմնական կենտրոնները: Նոր մոտեցումներ Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

<<Հայոց պատմություն>> առարկայի ուսուցման բովանդակությունը հիմնական դպրոցում կազմում են տեսական նյութը, գործնական աշխատանքները, ցուցադրումները (էքսկուրսիաները):

Ուսուցման գործընթացում, կախված թեմայից, դասի նպատակից, դասարանից, քննարկվող հիմնախնդրի և սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից ու այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դասի հատվածի համար ըստ նպատակահարմարության կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝

- ուսումնական նյութի բացատրում, լուսաբանում
- ինքնավերլուծություն, զրույցներ ու հարցազրույցներ շրջապատող մարդկանց տարբեր խմբերի հետ
- զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության վերլուծություն
- արվեստի տարբեր գործերի ուսումնասիրում
- հիմնախնդիրների հետազոտում
- դերային խաղեր
- ինտերնետի միջոցով շփում այլ մշակույթի ներկայացուցիչ հասակակիցների հետ
- հանդիպումներ հյուր դասախոսների հետ
- խաղերի, մրցույթների, հանդեսների անցկացում
- գրավոր հաղորդումների պատրաստում
- բանավեճեր, քննարկումներ
- թեստային աշխատանքների անցկացում
- նոր տեխնոլոգիաների օգտագործում, աշխատանք վիրտուալ գրադարանների հետ
- թղթապանակների շարունակական պատրաստում, մեկնաբանում
- անհատական ու խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:

Առարկայի դասավանդման ընթացքում կարևորվում է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործումը ինչպես տարբեր պատմական երևույթները համակողմանի ընկալելու, այնպես էլ ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակցվելու առումով:

ՍՈՎՈՐՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1 - 2. **Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ**

Ուսումնառության արդյունքում սովորողը պետք է՝

6-**րդ դասարան**

Հայոց հայրենիքը		
Ա մակարդակ	**Բ մակարդակ**	**Գ մակարդակ**
Իմանա՝ Հայրենիք (բնօրրան) հասկացության մասին, Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի մասին, օտարների կողմից հայերին և Հայաստանին տրված անունների մասին ***Կարողանա՝*** քարտեզի վրա ցույց տալ հայկական լեռնաշխարհի լեռները, գետերը, լճերը	***Իմանա՝*** Հայկական լեռնաշխարհի բնական սահմանները ***Կարողանա՝*** քարտեզի վրա ցույց տալ Մեծ Հայքի նահանգները, Հայկական լեռնաշխարհի նախնադարյան բնակավայրեր	***Իմանա՝*** Հայկական լեռնաշխարհի վարչական բաժանումը, այն նահանգները, որոնց տարածքի վրա ստեղծված են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունները ***Կարողանա՝*** նշել Հայկական լեռնաշխարհի աշխարհա-գրական դիրքի առանձ-նահատկությունները
Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության հնագույն բնօրրան		
Իմանա՝ նախնադարի փուլերը, բնակատեղիները (Գուգարք, Պորտաբլուր, Շենգավիթ, Լճաշեն) ***Կարողանա՝*** բնութագրել Հայկական լեռնաշխարհի բնիկների զբաղմունքը, աշխատանքի գործիքները, հասարակական խմբերը նախնադարյան համայնական հասարակարգում	***Իմանա՝*** նախամարդկանց նյութական և հոգևոր ձեռքբերումները **Կարողանա՝** տարբերակել հասարակության զարգացման փուլերը, բացատրել <<նեոլիթյան հեղափոխություն>> հասկացության իմաստը	***Իմանա՝*** Հակական լեռնաշխարհի պետական կազմավորումները **Կարողանա՝** պարզաբանել նախնադարյան հասարակության անկման և պետական կազմավորումների առաջացման պատճառները
Վանի համահայկական թագավորությունը		

Իմանա՝ Վանի թագավորության գոյության ժամանակահատվածը, մայրաքաղաքը, պետության տարբեր անվանումները ***Կարողանա՝*** արքաների անունները թվարկել ըստ ժամանակագրական հաջորդականության՝ նշելով մի քանի արքաների գահակալման տարեթվեր	***Իմանա՝*** արքաների անունները և գործերը Ասորեստանի հետ բախումների մասին, Էրեբունի ամրոցի հիմնադրման ժամանակը, վայրը, հիմնադրի անունը ***Կարողանա՝*** բնութագրել Վանի թագավորությունը որպես համահայկական պետություն բնութագրել առանձին արքաների ներքին և արտաքին քաղաքականությունը	***Իմանա՝*** Արարատյան թագավորության պետական կառուցվածքը և նրա տարերը Վանի թագավորության հզորացման, թուլացման և անկման պատճառները, Վանի թագավորության դերը Հայոց պատմության մեջ ***Կարողանա՝*** ներկայացնել Վանի թագավորության հզորացման, թուլացման և անկման պատճառները
Հայկազունի Երվանդականների թագավորությունը		
Իմանա՝ Պարույր Նահապետի, Երվանդ Սակավակյացի մասին Ք.ա. IV-III դդ. ստեղծված չորս հայկական թագավորությունների անունները ***Կարողանա՝*** բացատրել հակապարսկական ապստամբությունների պատճառները	***Իմանա՝*** Երվանդունիների արքայատոհմի ներկայացուցիչներին ըստ կառավարման հաջորդականության ***Կարողանա՝*** վերլուծել և համեմատել Գավգամելայի ու Մագնեսիայի ճակատամարտերի շնորհիվ Հայաստանի համար ստեղծված քաղաքական իրադրությունը, բնութագրել Երվանդունիների շինարարական գործունեությունը Մեծ Հայքում և Ծոփք-Կոմմագենեում Ք. ա. III դարում	***Իմանա՝*** հայ- մարական, հայ-պարսկական հարաբերությունների մասին ***Կարողանա՝*** վերլուծել Երվանդունիների թագավորության մասնատման հետևանքները

Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորությունը		
Իմանա՝ Արտաշեսյան թագավորության ժամանակագրական սահմանները ***Կարողանա՝*** արժևորել իրավիճակը ճկուն կերպով օգտագործելու՝ Արտաշես ստրատեգոսի կարողությունը, որի շնորհիվ Հայաստանը վերականգնեց իր անկախությունը	***Իմանա՝*** հայ-պոնտական դաշինքի կարևորությունը Հայաստանի և Պոնտոսի համար ու դրանից բխող պարտավորությունները Արտաշատի պայմանագրի հիմնական դրույթները ***Կարողանա՝*** վերլուծել Արտաշես I –ի ներքին ու արտաքին քաղաքականությունը	***Իմանա՝*** Արտավազդ II-ի և նրա հաջորդների գործունեության մասին ***Կարողանա՝*** գնահատել Արտաշես I –ի գործունեությունը
Հայաստանը աշխարհակալ տերություն		
Իմանա՝ հայկական հողերի միավորումն ավարտելու, դաշնակից ձեռք բերելու ուղղությամբ Տիգրան II-ի ձեռնարկած քայլերը Տիգրան II-ի նվաճումների մասին հայ-հռոմեական պատերազմի ժամանակագրությունը, առիթը և խոշոր ճակատամարտերը, Արտաշատի պայմանագրի ժամանակը,պետական գործիչների անունները ***Կարողանա՝*** կազմել Արտաշեսյան թագավորների գահացանկը, թվարկել Արտաշես I-ի բարենորոգումները	***Իմանա՝*** Մարկոս Կրասոսի և Մարկոս Անտոնիոսի արևելյան արշավանքների և դրանց նկատմամբ Արտավազդ II-ի վերաբերմունքի մասին ***Կարողանա՝*** ներկայացնել Տիգրանակերտի և Արածանիի ճակատամարտերի ընթացքը քարտեզի վրա ցույց տալ Տիգրան II-ի նվաճած տարածքները, հայկական	***Իմանա՝*** Արտավազդ II-ի և նրան հաջորդած Արտաշեսյան արքաների օրոք հայկական պետականության պահպանման ուղղությամբ գործադրված ջանքերը ***Կարողանա՝*** գնահատել Տիգրան II-ի տերության տնտեսական հզորությունը և ռազմաքաղաքական կշիռը Առաջավոր Ասիայում վերլուծել Տիգրանակերտի ճակատամարտում

	աշխարհակալ տերության սահմանները վերլուծել Ք.ա. I դարի երկրորդ կեսին ստեղծված քաղաքական նոր և Հայաստանի անկախության համար վտանգավոր իրադրությունը	հայկական զորքի պարտության և Արածանիի ճակատամարտում՝ հաղթանակի պատճառները և հետևանքները, գնահատել Արտավազդ II-ի որդեգրած արտաքին քաղաքական կողմնորոշումը
Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը *(I - III* ***դարեր****)*		
Իմանա հայ Արշակունիների նշանավոր թագավորներին ***Կարողանա՝*** համեմատել հայ Արշակունի տարբեր թագավորների գործունեությունը	***Իմանա՝*** հայ Արշակունի առանձին թագավորների գործունեության մասին ***Կարողանա՝*** ներկայացնել հայ Արշակունի թագավորներին ըստ գահակալման ժամանակագրական հաջորդականության	***Իմանա՝*** Մծբինի հաշտության կնքման ժամանակը և պայմանագրի էությունը ***Կարողանա՝*** բացատրել Սասանյան հեղաշրջումից հետո հայ-պարսկական հարաբերությունների վատթարացման պատճառները ներկայացնել և բացատրել հայ Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը

Հին Հայաստանի պետական կարգը, տնտեսությունը և սոցիալական կառուցվածքը		
Իմանա՝ Հին Հայաստանի պետական և տնտեսական կյանքի մասին, Հին Հայաստանի նշանավոր քաղաքները դրամ հատած առաջին հայ թագավորներին ***Կարողանա՝*** բնութագրել Հին Հայաստանի արքունիքն ու գործակալությունները	***Իմանա՝*** հայկական բանակի կառուցվածքը, նրա առավելագույն քանակն ու հզորության ժամանակը, դրամաշրջանառության դերը հին աշխարհում ***Կարողանա՝*** ներկայացնել մասնավոր տնտեսությունները նշել գյուղական համայնքների և մասնավոր տնտեսությունների դերն ու կարևորությունը հայկական պետության կյանքում	***Իմանա՝*** թագավորական իշխանության նշանակությունը, ստրատեգիա, ստրատեգոս, գեղջավագ, բդեշխություն տերմինների բացատրությունը ***Կարողանա՝*** գնահատել գործակալությունների դերը հայոց պետական կյանքում, հայկական բանակի դերը պետության կյանքում Հայաստանի տնտեսական կյանքի մակարդակը համեմատել ժամանակի հարևան պետությունների տնտեսական ձեռքբերումների հետ
Հին Հայաստանի մշակույթը		
Իմանա՝ հելլենիզմի բացատրությունը, հայկական հնագույն էպոսի, առասպելների, հին հայկական վեպի մասին ***Կարողանա՝*** ներկայացնել հեթանոսական նոր դիցարանը և տոմարը	***Իմանա՝*** հին հայկական մշակույթի տարբեր ոլորտների ձեռքբերումների մասին հեթանոսության սահմանումը, հին շրջանում Հայաստանում գրավոր խոսքում կիրառված լեզուները: ***Կարողանա՝*** բացատրել մեհենագրեր, մագաղաթ, ամֆիթատրոն հասկացությունները	***Իմանա՝*** ամրոցների և տաճարների կառուցման նպատակը ***Կարողանա՝*** Հին Հայաստանի քաղաքների կառուցվածքը՝ Տիգրանակերտի և Արտաշատի օրինակով, ամրոցների կառուցվածքը՝ Գառնիի ամրոցի օրինակով

7-**րդ դասարան**

Ավատատիրության հաստատումը Հայաստանում		
Ա մակարդակ	**Բ մակարդակ**	**Գ մակարդակ**
Իմանա՝ ավատատիրական հարաբերությունների էությունը, ձևավորման ժամանակը: Գահնամակի և Զորանամակի մասին **Կարողանա՝** թվարկել հողատիրության ձևերը	**Իմանա՝** Հայաստանի պետական կարգը, թագավորների և ավատական իշխանություն-ների հարաբերությունները **Կարողանա՝** բացատրել ավատական հողատիրության ձևերը, թվարկել գործակալությունները	**Իմանա՝** գործակալությունների գործառույթները **Կարողանա՝** մեկնաբանել համեմատել հին շրջանի և վաղ միջնադարի Հայաստանի հասարակական կյանքը, պետական կարգը, երկրի սահմանները և բանակը
Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն		
Իմանա՝ քրիստոնեության ընդունման հետ կապված կարևոր փաստերը և գործիչներին **Կարողանա՝** բնութագրել Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներին և նրանց գործունեությունը	**Իմանա՝** քրիստոնեության տարածման և պետական կրոն հռչակելու հետ կապված կարևոր իրադարձությունները **Կարողանա՝** ներկայացնել քրիստոնեության հաստատման ընթացքը Հայաստանում, վերլուծել Հայոց եկեղեցու դերը	**Իմանա՝** քրիստոնեության ընդունման անհրաժեշտության հետ կապված պատմական դեպքերն ու երևույթները **Կարողանա՝** Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու անհրաժեշտությունը, հայոց դարձի պատմական նշանակությունը
Պայքար թագավորական իշխանության ամրապնդման համար		

Իմանա՝ Արշակունիների արքայատոհմի նշանավոր արքաներին Հայաստանի բաժանումների և Արշակունիների թագավորության անկման հետ կապված կարևոր փաստերը **Կարողանա՝** պարզաբանել Արշակունիների արքայատոհմի ժառանգական դառնալու առանձնահատկությունները	**Իմանա՝** առանձին թագավորների վարած ներքին և արտաքին քաղաքականությունն ամբողջությամբ **Կարողանա՝** նշել Արշակունի արքաների օրոք տեղի ունեցած կարևոր դեպքերը՝ տնտեսական, քաղաքական տեղաշարժերը, շինարարական աշխատանքները, պատերազմները	**Իմանա՝** Հռոմի և Պարսկաստանի, Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանումների, Արշակունիների թագավորության անկման ժամանակի մասին **Կարողանա՝** առանձնացնել և վերլուծել IV դարում Հայաստանի ներքաղաքական և արտաքին քաղաքական կյանքի ամենակարևոր խնդիրներն ու ներկայացնել դրանց վերաբերյալ տարբեր քաղաքական դիրքորոշումներ
Ազատագրական շարժումները V դարում		
Իմանա՝ Վարդանանց և Վահանանց պատերազմների ժամանակը, ղեկավարներին **Կարողանա՝** Վարդանանց և Վահանանց պատերազմների դեպքերը ներկայացնել ժամանակագրական հաջորդականությամբ	**Իմանա՝** աշխարհագիր□ տերմինի բացատրությունը կարևոր ճակատամարտերը և արդյունքները **Կարողանա՝** համեմատել տարբեր ճակատամարտերը, գտնել դրանց նմանություններն ու տարբերությունները, համեմատել ազատագրական պայքարի ղեկավարներին	**Իմանա՝** Վարդանանց և Վահանանց պատերազմների պատճառները **Կարողանա՝** գնահատել ազատագրական պայքարի ղեկավարներին, նրանց հրամանատարական ու դիվանագիտական ունակությունները, վերհանել V դարի ապստամբությունների պատմական նշանակությունը
Հայաստանը VI - IX դարերում		

Իմանա՝ VI դարում Հայաստանում Բյուզանդիայի վարած քաղաքականության և հակաբյուզանդական ելույթների ու ապստամբությունների հետ կապված կարևոր փաստերը, դեպի Հայաստան արաբական արշավանքների ժամանակը, 652 թ. հայ–արաբական պայմանագրի կնքման վայրը, կնքող անձանց, Հայաստանի ինքնավարության վերականգնման հետ կապված հիմնական փաստերը	**Իմանա՝** պարսկա–բյուզանդական տիրապետության դեմ հայերի կարևոր զինված ելույթների ղեկավարներին, հիմնական դեպքերը, դեպի Հայաստան արաբների արշավանքներն ըստ ժամանակագրական հաջորդականության, արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի ակնառու դրվագները, իշխանական տոհմերը և դրանց մի քանի ներկայացուցիչների, ոստիկան, գլխահարկ, երդ, ամիրայություն և աղանդավորության անվանումների բացատրությունը	**Իմանա՝** պարսկա–բյուզանդական տիրապետության դեմ հայերի պայքարի պարտության պատճառները Հայաստանում արաբների քաղաքականության նպատակները և հիմնական ուղղությունները
Կարողանա՝ թվարկել Հուստինիանոս I–ի ռեֆորմները, Արևելյան Հայաստանի վարչական ու տնտեսական կյանքում պարսից արքունիքի կատարած փոփոխությունները, ներկայացնել ազատագրական պայքարի առանձին դրվագներ, համեմատել Մամիկոնյան և Բագրատունի իշխանական տոհմերի դիրքորոշումն ազատագրական պայքարի ուղիների վերաբերյալ	**Կարողանա՝** վերլուծել Հուստինիանոս I–ի ռեֆորմները, համեմատել Պարսկաստանի և Բյուզանդիայի վարած քաղաքականությունը, գնահատել 652 թ. հայ–արաբական պայմանագիրը, արժևորել 850 - 855 թթ. համաժողովրդական ապստամբության պատմական նշանակությունը, բնութագրել VI - IX դդ. հայկական ճարտարապետական կոթողներ, վերլուծել արաբների քաղաքականության հետևանքները	**Կարողանա՝** վերլուծել VI դ. Հայաստանում Բյուզանդիայի և Պարսկաստանի վարած քաղաքականության հետևանքները, համեմատել արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի պայքարի VIII-IX դարերի դրվագները, մատնանշել Արաբական խալիֆայության թուլացման պատճառները, պարզաբանել Հայաստանի ինքնավարության վերականգնման ներքին և արտաքին նախադրյալները
Հայկական մշակույթը *V - IX* ***դդ.***		

Իմանա՝ հայոց գրերի ստեղծման ժամանակը, գրերի գյուտին աջակցող պետական գործիչնե-րին, V - IX դդ.–ի կրթության, գիտության և արվեստի հետ կապված կարևորագույն փաստերը ***Կարողանա՝*** բացատրել Քերթողահայր, <<Թագուհի թարգմանու-թեանց>>, <<Ոսկեդար>> տերմինների բացատրությունը	***Իմանա՝*** V - IX դդ. հայ պատմիչների, փիլիսոփաների, իրավագետների և բնագետների, արվեստի գործիչների անունները ***Կարողանա՝*** հայ գործիչների ստեղծագործություններից դրվագներ և վերլուծել դրանք	***Իմանա՝*** V - IX դդ. հայ պատմիչների, փիլիսոփաների, իրավագետների և բնագետների, արվեստի գործիչների գործերը և նրանց ստեղծման պատմական ժամանակաշրջանը ***Կարողանա՝*** արժևորել հայ գործիչների ստեղծագործությունները և նրանց դերը մշակույթի զարգացման գործում
Հայաստանի Բագրատունյաց թագավորությունը		
Իմանա՝ Բագրատունյաց արքայատոհմի թագավորներին ըստ ժամանակագրական հաջորդականության, ենթակա թագավորությունները և նշել դրանց առաջացման ժամանակը, ***Կարողանա՝*** տարբերակել պետականության վերականգնման ներքին և արտաքին նախադրյալները, զարգացման առանձնահատկությունները և անկման պատճառները	***Իմանա՝*** տնտեսության զարգացման առանձնահատկությունները, միջնադարյան Հայաստանի քաղաքները և դրանց կառուցվածքը ***Կարողանա՝*** առանձնացնել և վերլուծել Բագրատունյաց թագավորության թուլացման և անկման ներքին ու արտաքին պատճառները	***Իմանա՝*** Բագրատունյաց արքայատոհմի թագավորների ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, Բագրատունյաց թագավորության կառավարման համակարգը ***Կարողանա՝*** համեմատել Արշակունիների և Բագրատունիների օրոք հայկական պետության տնտեսական կյանքն ու պետական կարգը
Հայ ժողովրդի պայքարը օտարերկրյա զավթիչների դեմ: Զաքարյաններ		

Իմանա՝ դեպի Հայաստան սելջուկ–թյուրքերի և մոնղոլների ար-շավանքների հետ կապված որոշ փաստեր, Հայաստանի կիսանկախ թագավորություններն ու իշխանությունները և Զաքարյանների կողմից ազատագրված տարածքները ***Կարողանա՝*** համեմատել սելջուկների և մոնղոլների արշավանքները և դրանց հետապնդած նպատակները	***Իմանա՝*** Զաքարյան իշխանական տոհմի դերը վրացական պետության կյանքում և դերը Հայաստանի հյուսիս–արևելյան շրջանների ազատագրման գործում ***Կարողանա՝*** վերլուծել հայ–վրացական զինակցության պատճառներն ու արդյունքները	***Իմանա՝*** սելջուկ –թուրքերի և մոնղոլ թաթարների նվաճումների հետևանքները, հայ իշխանական տները և նրանց տիրույթները ***Կարողանա՝*** գնահատել ընդհանուր թշնամու դեմ ազատագրական պայքարում ժողովուրդների միասնության և փոխհամաձայնեցված գործողությունների դերը, վերլուծել մոնղոլների տիրապետության հետևանքները որպես հայ ժողովրդին ազատագրական պայքարի մղող հանգամանք
Կիլիկյան Հայաստան		

Իմանա՝ Կիլիկիայի տեղը, դիրքը և պատմաաշխարհագրական առանձնահատկությունների, Հայկական իշխանությունների և դրանց առաջացման ժամանակի մասին, Ռուբինյան իշխաններին և նրանց հետ կապված կարևոր իրադարձություններ, Հեթումյան արքայատոհմի հաստատման ժամանակը, այդ տոհմի որոշ ներկայացուցիչների ***Կարողանա՝*** բնութագրել Ռուբինյան և Հեթումյան նշանավոր գահակալներին, բացատրել մոնղոլների հետ դաշնակցելու պատճառները	***Իմանա՝*** Կիլիկյան թագավորության ստեղծման նախադրյալները, Հեթումյան արքայատոհմի հաստատման քաղաքական պայմանները, հայ-մոնղոլական պայմանագրի հիմնական կետերը ***Կարողանա՝*** բացատրել գունդստաբլ, պայլ, մամլուքներ, ունիթորներ, հակաունիթորներ հասկացությունների բացատրությունը, վերլուծել Կիլիկիայի հայկական թագավորության թուլացման ու անկման պատճառները	***Իմանա՝*** Կիլիկյան գահակալների ձեռքբերումները, պետության կառուցվածքը և տնտեսության ճյուղերը ***Կարողանա՝*** գնահատել բուն հայրենիքից հեռու պետականություն կերտելու հայ ժողովրդի ձգտումը, բացատրել դեպի Արևմուտք քաղաքական շրջադարձի պատճառները, համեմատել Բագրատունյաց թագավորության և Կիլիկիայի թագավորության տնտեսական ու պետական կարգը
Հայկական մշակույթը *X - XIV* ***դարերում***		
Իմանա՝ X - XIV դդ. հայ մշակույթի ուղղությունները, գործիչներին կրթօջախները, գիտության և արվեստի կարևոր բնագավառները ***Կարողանա՝*** բացատրել հայկական մշակույթի վերածննդի նախադրյալները,	***Իմանա՝*** գործիչների ստեղծագործություններն ու դրանց ստեղծման ժամանակաշրջանը, <<Տիեզերական պատմություն>>, վանական համալիր, առակ, խաչքար, խազեր, շարական, վարդապետարան, մանրանկարչություն անվանումների ու հասկացությունների բացատրությունը ***Կարողանա՝*** բնութագրել մշակույթի որոշակի ուղղության զարգացումը, նրա ներկայացուցիչների գործունեությունը,	***Իմանա՝*** պատմագրության տեսակները, իրավագիտության ձեռքբերումները ***Կարողանա՝*** բնութագրել պատմագրության ուղղությունները X - XIV դարերում, համեմատել հայ մշակույթի

	ներկայացնել Տաթևի և Գլաձորի համալսարանների գործունեությունը	զարգացման տարբեր դարաշրջանները. V – IX և X – XIV դարեր
Հայաստանը** XV - XVII **դարերում		
Իմանա՝ XV դարում Հայաստան արշաված օտար նվաճողների մասին, Ամենայն Հայոց կաթողիկոսությունն էջմիածնում վերահաստատվելու ժամանակը և նախաձեռնողներին, XVI - XVII դդ. թուրք-պարսկական պատերազմների որոշ իրադարձությունների մասին ***Կարողանա՝*** բացատրել՝ վիլայեթ (փաշայություն), խանություն, ենիչերական զորք, պարոնտեր, պարգևական հող, համքարություն հասկացությունները	***Իմանա՝*** 1604 թ. հայերի բռնագաղթի ընթացքը, թուրք-պարսկական տիրապետության հետևանքները հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, ազգային և կրոնական կյանքում թուրք-պարսկական տիրապետության պայմաններում պահպանված հայկական մելիքությունները, ***Կարողանա՝*** բացատրել թուրք-պարսկական պատերազմների պատճառները, Ամենայն Հայոց կաթողիկոսությունն էջմիածնում վերահաստատելու անհրաժեշտությունն ու նախադրյալները	***Իմանա՝*** Հայաստանի ազատագրության ուղղությամբ հայ գործիչների գործադրած ջանքերը, խնդրի լուծման նրանց տարբերակները, XVI դարում և XVII դ. առաջին կեսին Հայաստանի ազատագրության խնդիրը բարձրացրած գործիչներին ***Կարողանա՝*** գնահատել Ամենայն Հայոց կաթողիկոսությունն էջմիածնում վերահաստատելու փաստը, վերլուծել 1604 թ. հայերի բռնագաղթի պատճառները և հետևանքները, վերլուծել Հայաստանի ազատագրության խնդրում եվրոպական պետությունների հետ կապված հույսերի ձախողման պատճառները
***Հայկական մշակույթը** (XV **դար** - XVII **դարի առաջին կես**)*		
Իմանա՝ XV - XVII դդ. հայ մշակույթի առանձնահատկությունները և նշանավոր գործիչներին, հայկական տպագրության հիմնադրին, ժամանակը, վայրը ***Կարողանա՝*** համեմատել տպագրության վայրերը և դրանցում տպագրված գրքերը	***Իմանա՝*** հայկական կրթօջախները, տպագրության տարածման հետ կապված կարևորագույն փաստերը և գիտության ու արվեստի բնագավառները ***Կարողանա՝*** բացատրել տերմիններն ու հասկացությունները	***Իմանա՝*** գիտության և արվեստի գործիչների ստեղծագործությունները և դրանց ստեղծման պատմական ժամանակը ***Կարողանա՝*** գնահատել դպրոցների և մշակութային գործիչների դերը նոր սերնդի կրթության, մշակույթի պահպանման և փոխանցման գործում

8-րդ դասարան

Ազատագրական պայքարի նոր փուլը XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարում		
Ա մակարդակ	**Բ մակարդակ**	**Գ մակարդակ**
Իմանա՝ հայ ազգային ազատագրական շարժման XVII դ. երկրորդ կեսի և XVIII դ. հայտնի գործիչներին, XVII դ. երկրորդ կեսին և XVIII դ. կազմված ազատագրական ծրագրերի մասին ***Կարողանա՝*** բացատրել սղնախներ, խամսայի մելիքություններ հասկացությունները	***Իմանա՝*** հայ ազգային-ազատագրական պայքարի առանձնահատկությունները նոր ժամանակներում, Հայաստանի քաղաքական մասնատվածության հետևանքները հայ ժողովրդի տնտեսական, հասարակա-կան-քաղաքական ու մշակութային կյանքում ***Կարողանա՝*** բնութագրել ազատագրական պայքարի հայտնի կազմակերպիչների, ղեկավար գործիչների և նրանց գործնեությունը, վերհանել ազատագրական շարժման հայտնի գործիչ-ների կատարած դերը	***Իմանա՝*** նոր ժամանակներում Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ - տնտեսական և հասարակական - քաղաքական զարգացման առանձնահատկությունների մասին ***Կարողանա՝*** վերլուծել ազատագրական պայքարի առանձին դրվագներում հայերի հաղթանակի կամ պարտության պատճառները, համեմատել Հայաստանի ազատագրության Հյուսիսային և Հարավային ծրագրերը
Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին		
Իմանա՝ Արևելյան Հայաստանի սոցիալ տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի հետ կապված կարևոր փաստեր ***Կարողանա՝*** բացատրել խանություններ, մահալներ, միրբոլուքներ, քալանթարներ, Հայկական մարզ, եկեղեցական կանոնադրություն հասկացությունները	***Իմանա՝*** Հայ ժողովրդի ազատագրական ձգտումների հետ կապված գործիչներին և նրանց հետ կապված փաստերը ***Կարողանա՝*** բացատրել ռուս-պարսկական պայմանագրերի հիմնական դրույթները	***Իմանա՝*** Մերձավոր Արևելքում Ռուսաստանի նվաճողական ծրագրերի և այդ տեսանկյունից Հայաստանի ռազմավարական կարևորության մասին ***Կարողանա՝*** գնահատել Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու նշանակությունը
Արևմտյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին		
Իմանա՝ Արևմտյան Հայաստանի սոցիալ - տնտեսական,	***Իմանա՝*** ռուս –թուրքական պատերազմների	***Իմանա՝*** թուրք-պարսկական պատերազմների

հասարակական-քաղաքական կյանքի հետ կապված կարևոր փաստեր ***Կարողանա՝*** բացատրել վիլայեթ (փաշայություն), սանջակ (գավառ), էսնաֆություն և ռայա հասկացությունները	գործիչներին և դրանց հետ կապված կարևորագույն փաստերը ***Կարողանա՝*** բացատրել ռուս-թուրքական պատերազմների պատճառները	պայմանագրերը, դրանց հետ կապված գործիչներին և նրանց գործնեության կարևորագույն դրվագները ***Կարողանա՝*** վերլուծել ռուս-թուրքական պատերազմների հետևանքները
Հայկական մշակույթը *XVII* ***դարի երկրորդ կեսից մինչև*** *XIX* ***դարի առաջին կեսը***		
Իմանա՝ XVII - XIX դդ. առաջին կեսի մշակույթի գործիչներին և կենտրոնները ***Կարողանա՝*** Նշել հայկական մշակույթի զարգացման որոշ պայմաններ և առանձնահատկություններ	***Իմանա՝*** մշակույթի բնագավառներն ու ճյուղերը ***Կարողանա՝*** գնահատել հայկական դպրոցների դերը նոր սերնդի կրթության և հայապահպան-ման գործում	***Իմանա՝*** մշակույթի գործիչների ստեղծագործությունները և արվեստի նշանավոր գործերը ***Կարողանա՝*** համեմատել Արևելյան և Արևմտյան Հայաստանի մշկույթները և վերլուծել ընդհանուր և առանձնահատուկ գծերը
Հայաստանը Ռուսական և Օսմանյան կայսրությունների կազմում		
Իմանա՝ Արևմտյան և Արևելյան Հայաստանի սահմանները, Հայաստանի ազատագրության նոր ծրագրերի մասին, Հայկական մարզի ստեղծման տարեթիվը, Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ – տնտեսական վիճակի որոշ առանձնահատկություններ ***Կարողանա՝*** Քարտեզի վրա ցույց տա Արևմտյան և Արևելյան Հայաստանը, Պարզաբանել Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ – տնտեսական վիճակի որոշ առանձնահատկություններ	***Իմանա՝*** Հայաստանի ազատագրության նոր ծրագրերի հեղինակներին և բովանդակությունները, Հայկական մարզի կառավարիչներին, Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ – տնտեսական վիճակի կարևոր առանձնահատկություններն ու ընդհանրությունները ***Կարողանա՝*** Պարզաբանել կանոնադրությունը և դրա հետևանքները, Քարտեզի վրա ցույց տա և նշի Արևմտյան և Արևելյան Հայաստանի սահմանաբաժանումը,	***Իմանա՝*** Արևմտյան և Արևելյան Հայաստանի վարչական բաժանման և վարչամիավորների մասին, Հայկական մարզի կառավարիչներին Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ – տնտեսական վիճակի կարևոր առանձնահատկություններն ու ընդհանրությունները ***Կարողանա՝*** Համեմատել *Հայաստանի ազատագրության նոր ծրագրերը նախորդների հետ,* Քարտեզի վրա ցույց տալ նշանավոր վարչամիավորները,

	Մեկնաբանել Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ – տնտեսական վիճակի կարևոր առանձնահատկություններն ու ընդհանրությունները	ներկայացնել և համեմատել Հայաստանի սոցիալ – տնտեսական վիճակի կարևոր առանձնահատկություններն ու ընդհանրությունները
Ազգային-հասարակական շարժումները		
Իմանա՝ հայ հասարակական – քաղաքական մտքի նշանավոր գործիչներին և նրանց հետ կապված կարևորագույն փաստերը ***Կարողանա՝*** համեմատել հասարակական-քաղաքական տարբեր հոսանքները	***Իմանա՝*** հայ հասարակական քաղաքական հոսանքները և Զեյթունի ապստամբության կարևորագույն դրվագները ***Կարողանա՝*** վերլուծել սահմանադրական շարժման նախադրյալները բացահայտել սեփական դիրքորոշումը հասարակական հոսանքների նկատմամբ և հիմնավորել	***Իմանա՝*** սահմանադրական շարժման գործիչներին և հասարակական հոսանքների գաղափարախոսությունը ***Կարողանա՝*** արժևորել ազգային սահմանադրությունը և գնահատել Զեյթունի ապստամբության նշանակությունը
1877 - 1878 ***թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցի միջազգայնացումը***		
Իմանա՝ 1877 – 1878 թթ. պատերազմների կարևորագույն իրադարձությունները ***Կարողանա՝*** բացատրել պատերազմող կողմերի նպատակները	***Իմանա՝*** 1877 – 1878 թթ. պատերազմի գործիչների և նրանց գործնեության հետ կապված կարևոր դրվագները ***Կարողանա՝*** վերլուծել Հայկական Հարցի ծագման և միջազգայնացման գործընթացը բացատրել Հայկական հարց, <<երկաթե շերեփ>> հասկացությունները	***Իմանա՝*** Հայկական հարցը և դրանից բխող կարևորագույն փաստերը ***Կարողանա՝*** գնահատել Սան – Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերը և Հայկական հարցի միջազգայնացման հետևանքները
Հայ ժողովրդի ազգային -ազատագրական պայքարը *XIX* ***դ.*** *80-90* ***ական թթ.-ին***		
Իմանա՝ ազատագրական պայքարի հետ կապված կարևորագույն փաստերը	***Իմանա՝*** ազատագրական շարժման կարևորագույն կենտրոնները և գործիչներին	***Իմանա՝*** հայ ազգային կուսակցությունները, հայդուկային շարժման կենտրոնները և գործիչներին, 90-ական թթ.

Կարողանա՝ բացատրել ազգային - ազատագրական շարժման վերելքի պատճառները, ներկայացնել խմբակների և կուսակցությունների ծրագրերի հիմնական դրույթները	***Կարողանա՝*** բացահայտել ազգային ազատագրական պայքարի առանձնահատկությունները XIX դ. երկրորդ կեսին, վերլուծել ֆիդայական շարժման առաջացման – նախադրյալները, բացատրել ազատագրական պայքարի զինված փուլը, <<ֆիդայական շարժում>>, <<զանգվածային կոտորածներ>>, <<ինքնապաշտպանական մարտեր>> հասկացությունները	կոտորածների և ինքնապաշտպանական մարտերի կարևորագույն դրվագները ***Կարողանա՝*** գնահատել կոտորածների հետևանքները, ֆիդայական շարժման նշանակությունը և կուսակցությունների դերը ազատագրական պայքարում
Հայաստանը XX դարի սկզբից մինչ Առաջին աշխարհամարտը		
Իմանա՝ Արևմտյան և Արևելյան Հայաստանում XX դարի առաջին տասնամյակում տեղի ունեցած կարևորագույն փաստերը և ազատագրական շարժման գործիչներին, 1912 – 1914 թթ. Հայկական հարցին վերաբերող կարևորագույն փաստերը, հայերի ցեղասպանության և ինքնապաշտպանական մարտերի, մայիսյան հերոսամարտերի կարևորագույն փաստերը և գործիչներին ***Կարողանա՝*** բացատրել <<հայ-թաթարական ընդհարումներ>>, <<կամավորական շարժում>>, <<ցեղասպանություն>>	***Իմանա՝*** Առաքելոց վանքի կռիվը և Սասունի ապստամբության հիմնական դրվագները, Հայկական հարցի վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի հիմնական դրույթները, հայերի ցեղասպանության թուրքական ծրագիրը և 1915թ. ինքնապաշտպանության և մայիսյան հերոսամարտերի հիմնական դրվագները ***Կարողանա՝*** բացատրել ինքնապաշտպանական կռիվների և մայիսյան հերոսամարտերի նշանակությունը,	***Իմանա՝*** Ցարիզմի գաղութային քաղաքականությունը, հայ-թաթարական ընդհարումների պատճառները, երիտթուրքական հեղաշրջման պատճառները, Ադանայի կոտորածների և ինքնապաշտպանական մարտերի հիմնական դրվագները, ցեղասպանության դեմ բողոքի ձայնը բարձրացրած գործիչներին և Մեծ եղեռնի նկատմամբ մեծ տերությունների վերաբերմունքի հետ կապված փաստերը ***Կարողանա՝*** գնահատել հայ-թաթարական ընդհարում-ների, կիլիկիահայության կոտորածների և հայոց Մեծ եղեռնի հետևանքները,

հասկացությունները,	համեմատել Հայաստանի նկատմամբ ռուսական և թուրքական կառավարու-թյունների վարած քաղաքականությունը, կատարել եզրահանգումներ	գնահատել և արժևորել առաջադեմ մարդկության վերբերմունքը ցեղասպանության նկատմամբ, հիմնավորել մայիսյան հերոսամարտերի դերը անկախ պետականության վերականգման գործում
Հայկական գաղթավայրերը *XVII - XX* ***դարի սկզբին***		
Իմանա՝ գաղութների առաջացման ժամանակագրական շրջանակները ***Կարողանա՝*** բացատրել <<գաղութ>>, <<համայնք>> հասկացությունները	***Իմանա՝*** գաղութահայ հիմնական կենտրոնները և գործիչներին ***Կարողանա՝*** բացատրել գաղութների առաջացման պատճառները	***Իմանա՝*** գաղթավայրերի հասարակական կյանքին վերաբերող կարևորագույն դրվագներ ***Կարողանա՝*** գնահատել հայկական գաղթավայրերի դերը հայ ժողովրդի կյանքում
Հայկական մշակույթը *XIX* ***դարի երկրորդ կեսից մինչև*** *1918* ***թ.-ը***		
Իմանա՝ մշակույթի կարևորագույն փաստերն ու գործիչներին ***Կարողանա՝*** բացատրել մշակույթի վերելքի պատճառները	***Իմանա՝*** մշակույթի կարևորագույն բնագավառները, կրթական հաստատությունները ***Կարողանա՝*** վերլուծել արևելահայ և արևմտահայ մշակույթի ընդհանուր գծերը և առանձնահատկությունները	***Իմանա՝*** մշակութի կարևորագույն ստեղծագործործությունները և արվեստի գործերը ***Կարողանա՝*** գնահատել մշակույթի դերը հայապահպանության և ազգային - հոգևոր արժեքների հարստացման գործում

9-րդ դասարան

Ա մակարդակ	Բ մակարդակ	Գ մակարդակ
Հանրապետության կայացումը		
Իմանա՝ Հայաստանի Հանրապետության հռչակման օրը, խորհրդանիշները, հայոց բանակի առաջին ղեկավար գործիչներին	***Իմանա՝*** Հայաստանի Հանրապետության կառուցվածքը, խորհրդարանում ներկայացված կուսակցությունները և ազգային փոքրամասնությունները	***Իմանա՝*** Բաթումի հաշտության պայմանագրի կնքման մանրամասները և կետերը,

Կարողանա՝ պարզաբանել Անդրկովկասյան սեյմի լուծարման պատճառները և Հայաստանի անկախության հռչակման պատմական անհրաժեշտությունը, արժևորել ազգային բանակի ստեղծումը պետության կայացման գործում	***Կարողանա՝*** տարանջատել Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր և գործադիր իշխանությունները և նրանց գործառույթները, բնութագրել Հայաստանի Հանրապետությունը	***Կարողանա՝*** պարզաբանել Հայաստանի դիվանագիտական հարաբերությունները և դրանց կարևորությունը, համեմատել Բրեստ-Լիտովսկի և Բաթումի հաշտության պայմանագրերը, արժևորել Հայաստանի Հանրապետության անկախության վերականգման պատմական նշանակությունը
Հանրապետության սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը		
Իմանա՝ երկրի սոցիալ-տնտեսական վիճակը և գոյություն ունեցող հիմնական խնդիրները, Հանրապետությունում գործող քաղաքական կուսակցությունները	***Իմանա՝*** երկրի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ու զարգացմանն ուղղված պետական միջոցառումները, կրթական համակարգի նորամուծությունները, գիտության և մշակույթի գործիչներին	***Իմանա՝*** 1920 թ. Մայիսյան ապստամբության կազմակերպիչներին և ապստամբությունը ճնշելու կառավարության միջոցառումները
Կարողանա՝ պարզաբանել Հայաստանից դուրս գտնվող գաղթականների ներգաղթի կազմակերպման անհրաժեշտությունը, արժևորել ԱՄՆ-ի և հատկապես Ամերկոմի օգնությունը հայ գաղթականության և որբ երեխաների պահպանության գործում	***Կարողանա՝*** պարզաբանել Ամերկոմ, էսէռ, հապավումները, բնութագրել ՀՀ կրթական համակարգը, արժևորել կրթական համակարգի բարեփոխումները և ազգային-մշակութային կյանքի աշխուժացմանն ուղղված պետական միջոցառումները	***Կարողանա՝*** մեկնաբանել բյուրո-կառավարություն, Արմենկոմ, ռազմահեղափոխական կոմիտե,վերջնագիր ձևակերպումներն ու հասկացությունները, բացահայտել մայիսյան ապստամբության պարտության պատճառները, թուրք-թաթարական խռովությունների վնասակար նշանակությունը երկրի ներքին կյանքում
Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը *1918 -1920* ***թթ.: Հայկական հարցը***		
Իմանա՝ Հայաստանի հարաբերությունները Քառյակ դաշինքի երկրների հետ և հայկական պատվիրակությունների կազմը, Փարիզի խորհրդաժողովի	***Իմանա՝*** հայ-վրացական տարածքային խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները, Խորհրդային Ռուսաստանի հետ Մոսկվայում սկսված բանակցությունների	***Իմանա՝*** Թիֆլիսի համաձայնագրի կետերը, Արևմտահայերի II համագումարի որոշումները, Սևրի պայմանագրի 88 - 93 հոդվածների ընդհանուր բովանդակությունը,

հրավիրման ժամանակը, Հայկական հարցը ներկայացնող պատվիրակությունները և նրանց միջև առկա տարաձայնությունները ***Կարողանա՝*** մեկնաբանել Հայաստանի հարաբերությունները նրա անմիջական հարևաններ Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի և Իրանի հետ, բացահայտել Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախության ճանաչման անհրաժեշտությունը, վերլուծել <<Միացյալ և Անկախ Հայաստանի>> հռչակագիրը	ընթացքը և հայկական կողմը ներկայացնող պատվիրակության կազմը, Փարիզի խորհրդաժողովում հայկական պատվիրակությունների կողմից ներկայացված հուշագրի ընդհանուր բովանդակությունը ***Կարողանա՝*** բացատրել մանդատ, <<չեզոք գոտի>>, Արևելյան լեգեոն, ազգային պատվիրակություն, միլլի շարժում,անվանումները, հասկացությունները մեկնաբանել Կիլիկիայում հայկական ինքնավարության վերականգման նշանակությունը, պարզաբանել Ջավախքի, Լոռու, Զանգեզուրի Ղարաբաղի և Նախիջևանի հիմնախնդիրները	Կիլիկիահայության կոտորածների մասին ***Կարողանա՝*** բացահայտել Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը, բացահայտել <<Միացյալ և Անկախ Հայաստանի>> հռչակագրի ընդունման անհրաժեշտությունը, ընդհանուր գծերով բնութագրել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը, վերլուծել Ֆրանսիայի վարած քաղաքականությունը Կիլիկիայում և դրա ծանր հետևանքները կիլիկիահայության համար
Հայաստանի Հանրապետության անկումը		
Իմանա՝ Քեմալական շարժման ղեկավարի և դրա նպատակների մասին, Թուրք -հայկական պատերազմի կարևորագույն իրադարձությունների մասին ***Կարողանա՝*** մեկնաբանել <<ազգային ուխտ>>, մեջլիս արտահայտությունները, բացահայտել Խորհրդային Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի մերձեցման պատճառները	***Իմանա՝*** Ալեքսանդրապոլի պայմանագրի բովանդակությունը, Հայաստանի վերջին վարչապետին, Երևանի դեկտեմբերի 2-ի համաձայնագրի ընդհանուր բովանդակությունը ***Կարողանա՝*** մեկնաբանել միլլի շարժում, համաշխարհային հեղափոխություն արտահայտությունները, վերլուծել հայ-ռուսական հարաբերությունների հետագա զարգացումը	***Իմանա՝*** Արևելքի ժողովուրդների համագումարի մասին, նոյեմբերի 29-ի հռչակագիրը ***Կարողանա՝*** բացահայտել Արևելքի ժողովուրդների համագումարի նշանակությունը թուրք-հայկական պատերազմի գործում, մեկնաբանել Հայաստանի խորհրդայնացման <<սցենարը>>, վերլուծել Հայաստանի

		Հանրապետության անկման պատճառները
Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը *1920 - 1922* ***թթ.***		
Իմանա՝ խորհրդային իշխանության մարմինները, քաղաքացիական կռիվների ընթացքը, ԱԽՖՍՀ-ի կազմավորումը ***Կարողանա՝*** հիմնավորել հեղկոմների դերը որպես իշխանության օրենսդիր և գործադիր մարմիններ, մեկնաբանել ռազմական կոմունիզմ, պարենմասնատրում տերմինները, վերլուծել փետրվարյան ապստամբության պատճառները, հիմնավորել ԽՍՀՄ կազմավորման նշանակությունը	***Իմանա՝*** Հայաստանի սահմանադրության հիմնական բովանդակությունը, ԽՍՀՄ անդամ երկրները, ԱԽՖՍՀ-ի կազմալուծումը ***Կարողանա՝*** մեկնաբանել Չեկա, հեղափոխական տրիբունալ, դեկրետ հասկացությունները բնութագրել նոր տնտեսական քաղաքականությունը,	***Իմանա՝*** Հայաստանի սահմանադրության հիմնական բովանդակությունը, ԽՍՀՄ անդամ երկրները, ԱԽՖՍՀ-ի կազմալուծումը ***Կարողանա՝*** համեմատել ռազմական կոմունիզմ և նէպ քաղաքականությունները
Սոցիալ տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքը Խորհրդային Հայաս-տանում *1922 - 1941* ***թթ.***		
Իմանա՝ Տնտեսության վերականգմանն ուղղված պետական միջոցառումները, քաղաքական բռնությունների իրականացման ժամանակաշրջանը,զոհերի ընդհանուր թիվը, ԽՍՀՄ նոր սահմանադրության ընդունման ժամանակը,հիմական բովանդակությունը ***Կարողանա՝*** մեկնաբանել ինդուստրացում, կոլեկտիվացում, կուլակ, Անհատի պաշտամունք տերմինները, բնութագրել ԽՍՀՄ նոր սահմանադրությունը	***Իմանա՝*** ինդուստրացման և կոլեկտիվացման իրականացման ժամանակը և կարևորագույն ձեռքբերումները, զանգվածային բռնությունների չափերն ու իրականացման փուլերը ***Կարողանա*** բացահայտել ինդուստրացման անհրաժեշտությունը, Անհատի պաշտամունքի էությունն ու ծանր հետևանքները, համեմատել ինդուստրացում	***Իմանա՝*** Հայաստանում զարգացող արդյունաբերական ճյուղերը,արդյունաբերական նշանավոր կենտրոնները ***Կարողանա՝*** բացահայտել ինդուստրացման արագ տեմպերի ծանր հետևանքները և առաջացած բնապահպանական խնդիրները,կոլեկտիվացման ընթացքում թույլ տրված

	և նէպ քաղաքականությունները	սխալները, վերլուծել մասնավոր և կոլեկտիվ տնտեսությունների առավելություններն ու ընդհանուր տարբերությունները
Հայկական Սփյուռքի ձևավորումը		
Իմանա՝ Սփյուռքի առաջացման, Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսների հրավիրման ժամանակները և հայկական պատվիրակությունների կազմը ***Կարողանա՝*** բացատրել սփյուռքի առաջացման պատճառները, բնութագրել Ֆ. Նանսենի գործունեությունը	***Իմանա՝*** 1920 - 1936 թթ. հայրենադարձության կազմակերպման փուլերը և ներգաղթի ցուցանիշները, ՀՕԿ-ի գործունեության մասին ***Կարողանա՝*** բացատրել <<Հայկական սփյուռք>>, <<Ազգային օջախ>>, <<<Հայրենադարձություն>> հասկացությունները	***Իմանա՝*** Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներում Հայկական հարցի քննարկումների և արդյունքների մասին ***Կարողանա՝*** գնահատել հայրենադարձության նշանակությունը Խորհրդային Հայաստանի սոցիալ- տնտեսական և հասարակական – քաղաքական, մշակութային կյանքում
Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին		
Իմանա՝ Հայրենական պատերազմի և նրա փուլերի ժամանակագրական սահմանները, հայկական դիվիզիաները և նրանց մարտական ուղին ***Կարողանա՝*** բացահայտել պատերազմի սկզբում խորհրդային զորքերի պարտության պատճառները, պարզաբանել խորհրդային իշխանության վերաբերմունքը հայոց եկեղեցու նկատմամբ պատերազմի տարիներին	***Իմանա՝*** Հայրենական պատերազմի փուլերի առանձնահատկությունները, հայ մարշալների, գեներալների, հերոսների անունները ***Կարողանա՝*** բացահայտել ֆաշիզմի դեմ պայքարում Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի մասնակցությունն ու ներդրումների հիմնական ուղղությունները	***Իմանա՝*** պարտիզանական պայքարի դրսևորումները, նշանավոր հայ մարշալների, գեներալների, հերոսների կյանքը և գործունեությունը ***Կարողանա՝*** արժևորել հայ ժողովրդի մասնակցությունը պատերազմի
Խորհրդային Հայաստանի մշակույթը *(1920 – 1945* ***թթ.)***		
Իմանա՝ մշակութային գործի կազմակերպման առաջին միջոցառումները, հայկական մշակույթի	***Իմանա՝*** մշակույթի տարբեր ոլորտների նշանավոր ներկայացուցիչների անունները և նրանց	***Իմանա՝*** մշակույթի սփյուռքահայ նշանավոր գործիչներին և նրանց ստեղծագործությունները

կարևոր ձեռքբերումները գիտության և արվեստի բնագավառներում ***Կարողանա՝*** բնութագրել մշակույթի բնագավառում խորհրդային իշխանությունների վարած քաղաքականությունը, արժևորել ՀԽՍՀ ԳԱ ստեղծումը	ստեղծագործությունների անվանումները ***Կարողանա՝*** համեմատել Հայաստանի առաջին Հանրապետության և Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից մշակույթի նկատմամբ ունեցած մոտեցումները, պարզաբանել հետպատերազմյան տարիներին մշակույթի զարգացման պատճառները,	***Կարողանա՝*** պարզաբանել սփյուռքահայերի կյանքում ազգային մշակույթի պահպանության կարևորությունը, արժևորել մշակութային կապերի կարևորությունը համայն հայության միասնության պահպանման և ամրապնդման գործում
Հայկական Սփյուռքը հետպատերազմյան շրջանում		
Իմանա՝ Հայկական հարցի վերաբացմանը վերաբերող կարևորագույն փաստերի և դրանով զբաղվող ազգային կազմակերպությունների մասին ***Կարողանա՝*** բացատրել Խորհրդային Հայաստանի նկատմամբ սփյուռքահայության վերաբերմունքի փոփոխության պատճառները	***Իմանա՝*** հետպատերազմյան հայրենադարձության փուլերը և դրանց ժամանակագրական շրջանակները ***Կարողանա՝*** բացատրել <<Մեծ հայրենադարձություն>>, <<Հայ դատ>>, <<Սփյուռքահայ կենտրոններ>> հասկացությունները	***Իմանա՝*** հայրենադարձության դադարեցման, հետագայում կրկին շարունակվելու և Հայաստանից արտագաղթի պատճառները ***Կարողանա՝*** բնութագրել հայրենիք-սփյուռք կապերը հետպատերազմյան շրջանում և գնահատել դրանց նշանակությունը
Տնտեսությունը, հասարակական-քաղաքական կյանքը		
Իմանա՝ տնտեսության վերականգնմանն ուղղված միջոցառումները, Ստալինյան նոր բռնությունները և դրանց հետևանքները, վերակառուցման քաղաքականության ժամանակաշրջանը և դրա անհրաժեշտությունը ***Կարողանա՝*** պարզաբանել քաղաքական նոր բռնությունների պատճառները, համեմատել 1930-ական և	***Իմանա՝*** Հայաստանի հիմնական տնտեսական ձեռքբերումները 1945 - 1985 թթ. Խորհրդային ղեկավարների անունները և նրանց ժամանակաշրջանների բնութագրումները (Անհատի պաշտամունք, ձնհալ, լճացում) ***Կարողանա՝*** պարզաբանել Անհատի պաշտամունք, ձնհալ, լճացում, վերակառուցում, ազգային զարթոնք	***Իմանա՝*** ազգային զարթոնքի ժամանակաշրջանում Հայաստանում կատարված կարևորագույն ազգային իրադարձությունները, Գորբաչովյան վերափոխումները ***Կարողանա՝*** մեկնաբանել ժողովրդական տնտեսության ստեղծման անհրաժեշտությունը, վերլուծել վերակառուցման

1940-ական թվականների բռնությունները	հասկացությունները, տերմինները և արտահայտությունները, մեկնաբանել գյուղատնտեսության հիմնախնդիրները	քաղաքականության ձախողման պատճառները
Արցախյան շարժումը		
Իմանա՝ Արցախահայության ինքնորոշման մասին, Արցախյան շարժման սկիզբը, Սումգայիթյան ողբերգության ժամանակը և զոհերի թիվը ***Կարողանա՝*** վերլուծել Արցախյան շարժման պատճառները, պարզաբանել ադրբեջանական իշխանությունների դիրքորոշումը հիմնախնդրի նկատմամբ	***Իմանա՝*** 1988 թ. երկրաշարժի և համաշխարհային հանրության օգնության մասին, խորհրդային իշխանությունների կողմից Արցախյան շարժման բնութագրումները ***Կարողանա՝*** մեկնաբանել Ադրբեջանահայերի բռնագաղթը, համեմատել Ադրբեջանահայերի բռնագաղթը և Հայաստանի ադրբեջանաբնակների արտագաղթի պայմանները և ընթացքը	***Իմանա՝*** Արցախյան ազատագրական պատերազմի և նրա հաղթանակների մասին, Արցախյան պայքարի հերոսների մասին, ***Կարողանա՝*** բացահայտել Հայաստանում ժողովրդավարական ուժերի հաղթանակում Արցախյան շարժման դերն ու նշանակությունը, արժևորել ԼՂՀ ստեղծումը
Հայաստանի Հանրապետության անկախության գործընթացը		
Իմանա՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990 թ. մայիսյան ընտրությունների մասին ***Կարողանա՝*** համեմատել մայիսյան ընտրությունները նախորդ բոլոր ընտրությունների հետ	***Իմանա՝*** ՀՀ անկախության գործընթացի մասին ***Կարողանա՝*** բնութագրել ԽՍՀՄ կառույցը, համեմատել ԱՊՀ - ն և ԽՍՀՄ – ը	***Իմանա՝*** Արցախյան ազատագրական պատերազմի և նրա հաղթանակների մասին, Արցախյան պայքարի հերոսների մասին, ***Կարողանա՝*** Արժևորել արցախյան հերոսամարտերի դերը անկախ պետականության վերականգնման գործում
Խորհրդային Հայաստանի և Հայկական սփյուռքի մշակույթը *1945-1991* ***թթ.***		
Իմանա՝ մշակույթին վերաբերող կարևորագույն փաստերը և գործիչներին ***Կարողանա՝*** բացատրել մշակույթի	***Իմանա՝*** մշակույթի բնագավառները և Գիտությունների ակադեմիայի նշանավոր գործիչներին ***Կարողանա՝*** համադրել խորհրդահայ և	***Իմանա՝*** գիտության, գրականության նշանավոր ստեղծագործությունները և արվեստի գործերը ***Կարողանա՝*** վերլուծել բազմաշերտ

վերելքի պատճառները	սփյուռքահայ մշակույթների զարգացման պայմանները և վերլուծել դրանց ընդհանուր գծերն ու առանձնահատկությունները	մշակութային միջավայրերում սփյուռքահայ մշակույթի առանձնահատկությունները
Հայաստանի Հանրապետության ամրապնդման գործընթացը		
Իմանա՝ ՀՀ անկախության հռչակման մանրամասները, նախագահական ընտրությունների և ՀՀ առաջին նախագահի մասին ***Կարողանա՝*** բնութագրել Հայաստանի Հանրապետությունը	***Իմանա՝*** ՀՀ խորհրդանիշները, հայոց ազգային բանակի կազմավորման մասին ***Կարողանա՝*** բացահայտել պետականության կայացման գործում բանակի կատարած դերի և նշանակության մասին	***Իմանա՝*** ՀՀ Սահմանադրության մասին ***Կարողանա՝*** համեմատել Հայաստանի I, II, III Հանրապետությունները
ՀՀ տնտեսական դրությունը, հասարակական-քաղաքական կյանքը		
Իմանա՝ ՀՀ- ում գործող քաղաքական կուսակցությունները, 1991-1998թթ. ներքաղաքական զարգացումները ***Կարողանա՝*** Մեկնաբանել ՀՀ բազմակուսակցական համակարգը, վերլուծել 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչության ծանր հետևանքները	***Իմանա՝*** ՀՀ տնտեսական քաղաքականությունը ***Կարողանա՝*** պարզաբանել ՀՀ տնտեսական ճգնաժամի պատճառները, վերլուծել հողի սեփականաշնորհման թերություններն ու առավելությունները	***Իմանա՝*** ՀՀ ներքաղաքական նոր դրսևորումները ***Կարողանա՝*** բացահայտել 21-րդ դարի ներքաղաքական դրությունը
ՀՀ միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը		
Իմանա՝ ՀՀ դիվանագիտական կապերը ***Կարողանա՝*** արժևորել ՀՀ միջազգային ճանաչումը, բացահայտել ՀՀ արտաքին քաղաքականության հաջողությունները և	***Իմանա՝*** միջազգային կառույցներում ՀՀ անդամակցության մասին ***Կարողանա՝*** վերլուծել ՀՀ հարաբերությունները ԱՊՀ երկրների և հատկապես ՌԴ հետ	***Իմանա՝*** հայոց ցեղասպանության ճանաչման պատմությունը, հայոց ցեղասպանությունը արդեն դատապարտած պետությունները ***Կարողանա՝*** վերլուծել մեծ պետությունների դիրքորոշումը հայոց ցեղասպանության ճանաչման հարցում և

սխալները		Թուրքիայի վարած քաղաքականությունը
Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը		
Իմանա՝ 1991թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեի մասին, ԼՂՀ իշխանության մարմինները ԼՂՀ խորհրդանիշները ***Կարողանա՝*** բացահայտել Ադրբեջանի ագրեսիան ԼՂՀ – ի դեմ	***Իմանա՝*** հայկական ուժերի հակահարձակումը, Շուշիի և Լաչինի ազատագրումը ***Կարողանա՝*** վերլուծել վերլուծել պատերազմի հաջողությունները և պարտությունները	***Իմանա՝*** Զինադադարի կնքման մանրամասները և ժամանակը ***Կարողանա՝*** բացահայտել Լեռնային Ղարաբաղի հարցի միջազգայնացման և Մինսկի խմբի գործունեության նշանակությունը
Հայկական Սփյուռքը *1991* ***թվականից մինչև մեր օրերը***		
Իմանա՝ Սփյուռքահայ գլխավոր կենտրոնները ***Կարողանա՝*** բացատրել սփյուռքահայության ներդրումների անհրաժեշտությունը ՀՀ-ի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում	***Իմանա՝*** Հայաստանի Հանրապետությունում գործող սփյուռքահայ կազմակերպությունները կամ նրանց մասնաճյուղերը և նրանց հետ կապված կարևորագույն փաստերը ***Կարողանա՝*** արժևորել Սփյուռքահայության պայքարը Հայկական հարցի լուծման և ցեղասպանության միջազգային ճանաչման համար	***Իմանա՝*** Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում նոր մոտեցումների, հայրենիք-սփյուռք խորհրդաժողովների և համահայկական խաղերի մասին ***Կարողանա՝*** գնահատել Սփյուռքի մասնակցությունը հայկական պետականության ամրապնդման գործընթացին

3. **Արժեքային համակարգ**

Հիմնական դպրոցն ավարտողը պետք է՝

- ունենա ազգային ինքնագիտակցություն, գիտակցի իր ժողովրդի նյութական ու հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը
- կարևորի պետության և ազգային կառույցների դերը հայապահպանության և Հայաստանի զարգացման գործում
- կարևորի ազգային-պետական մտածողություն և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք
- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին
- գիտակցի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները կատարելու, ազգային և բարոյական արժեքներին հետևելու անհրաժեշտությունը
- կարևորի անձնական, հասարակական և ազգային շահերի միասնությունը, գիտակցի անձնական, խմբային, ազգային և պետական շահերի ներդաշնակեցման անհրաժեշտությունը
- կարևորի իր ակտիվ մասնակցության նշանակությունը Հայաստանում ժողովրդա-վարական, քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման գործում
- ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում
- ընդունի ժողովուրդների, կրոնների, մարդկանց ապրելակերպի միջև եղած տարբերությունները և հարգալից վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների մշակույթների հանդեպ
- գիտակցի ներկան և ապագան կերտելու գործում ազգային պատմության իմացության նշանակությունը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Կրթության մասին ՀՀ օրենքը:
2. Հանրակրթության մասին ՀՀ օրենքը:
3. Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան, 2011:

2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983:
2. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987:
3. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981:
4. Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1989:
5. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981:
6. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն. Թուղթ Վահան Մամիկոնյանին, Ե., 1982:
7. Սեբեոս, Պատմութուն, Երևան, 1979:
8. Ղևոնդ, Պատմություն, Երևան, 1982:
9. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութուն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885:
10. Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1971:
11. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1991:
12. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982:
13. Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956:
14. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986:
15. Թովմա Մեծոփեցի, Պատմագրութուն, Երևան, 1999:
16. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հտ. 1 (Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը), Երևան, 1981:
17. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հտ. 1 (Հնագույն ժամանակներից մինչև Ք. հ. 298 թվականը), Երևան, 2007:
18. Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն. 1721-1736 թթ. Վենետիկ, 1977:
19. Եսայի Հասան-Ջալալյանց, Համառոտ պատմություն Աղվանից երկրի, Երևան, 1997:
20. Նոր տետրակ, որ կոչի յորդորակ, Երևան, 1991:
21. Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), Երևան, 1998:
22. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972:
23. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1991:
24. Մեվլան Զատե Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, 1990:
25. Անտոնյան Ա., Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Երևան, 1990:

Բ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ադոնց Ն. Գ., Հայաստանի պատմություն. ակունքները (X-VI դդ. մ.թ.ա.): Հայերի ծագումը, Երևան, 1972:
2. Ադոնց Ն. Գ., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987:
3. Ավանդապատում (ցանկացած հրատարակություն):
4. Զուլալյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980:
5. Զուլալյան Մ. Կ., Հայոց պատմության թուրքական կեղծարարությունը, Ե., 1995:
6. Ժամկոչյան Հ. Գ., Աբրահամյան Ա. Գ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Պողոսյան Ս. Պ., Հայ ժողովրդի պատմություն (սկզբից մինչև XVIII դարի վերջը), Երևան, 1975:
7. Իսկանյան Վ. Կ., Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Եր., 1991:
8. Վ. Խաչատրյան, Հայաստանը Ք.ա. XV-VII դդ., Երևան, 1998:
9. Կիրակոսյան Գ. Ե., Հայաստանը Լենկթեմուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386-1500 թթ.), Երևան, 1997:
10. Հակոբյան Թ. Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984:
11. Հայ ժողովրդի պատմություն, հատ. I-VIII, ՀԽՍՀ ԳԱ հրատ, Երևան, 1971, 1972, 1976, 1984, 1967, 1970, 1972, 1974, 1981:
12. Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դդ., Երևան, 1976:
13. Հայոց պատմություն. հիմնահարցեր, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2000:
14. Հարությունյան Բ. Հ., <<Աշխարհացոյց>>-ը և չորս Հայքերի խնդիրը, Երևան, 1997:
15. Մանանդյան Հ. Հ., Երկեր, հտ. Ա-Զ, Երևան, 1977-1985:
16. Մանասերյան Ռ. Լ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ (մ.թ.ա 94-64 թթ.), Երևան, 1987:
17. Ռ. Մաթևոսյան, Բագրատունիներ, Երևան, 1995:
18. Մելիք-Բախշյան Ս. Տ., Հայոց պատմության աղբյուրագիտություն (հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի վերջը), Երևան, 1989:
19. Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը, Երևան, 2003:
20. Շահինյան Լ. Փ., Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան, 1993:
21. Տեր-Ղևոնդյան Ա. Ն., Հայաստանը VI-VIII դարերում, Երևան, 1996:
22. Օրմանյան Մ., Ազգապատում, հտ. 1-2, Կ. Պոլիս, 1912-1913, հտ. 3, Երուսաղեմ, 1927 կամ հհ. 1-3, Ս. Էջմիածին, 2001:
23. Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմություն, հտ. Ա, Բ, Երևան, 1964, 1967:
24. Ադոնց Ն. Գ., Հայկական հարց, Երևան, 1996:
25. Ավետիսյան Հ. Ա., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:
26. Դիլոյան Վ. Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989:
27. Զարեվանդ, Միացյալ, անկախ Թուրանիա, Երևան, 1993:
28. Զոհրաբյան Է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997:
29. Գ. Թամամյան, Առաջադրանքներ և խնդիրներ հայ ժողովրդի պատմությունից, Երևան, 1977:
30. Խրիմյան Հայրիկ, Դրախտի ընտանիք, Երկեր, Երևանի համալս. հրատ., Եր., 1992:
31. Խատիսյան Ա., Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:
32. Խուրշուդյան Լ. Ա., Հայկական հարցը. բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, Երևան, 1995:
33. Խուրշուդյան Լ. Ա., Հայոց ազգային գաղափարախոսությունը, Երևան, 1999:
34. Կարապետյան Մ. Ս., Հայաստանը 1912-1920 թվականներին. ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2003:
35. Կարապետյան Մ. Ս., Հայաստանը 1920-1991 թվականներին. ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2007:

36. Կիրակոսյան Ա. Ջ., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ.-1914 թ.), Երևան, 1999:
37. Կիրակոսյան Ջ. Ա., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967:
38. Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Երևան, 2005:
39. Համբարյան Ա. Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Երևան, 1999:
40. Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996:
41. Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր, մաս 1-3, Երևան, 1995:
42. Հարությունյան Ա. Հ., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984:
43. Մելիքսեթյան Հ. Ու., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, 1985:
44. Մկրտչյան Լ. Հ., Զեյթունի ապստամբությունը (1895-1896 թթ.), Երևան, 1995:
45. Նազարյան Ա. Ս., Հայկական զորամասերի կազմավորումը կովկասյան ճակատում (1914-1918 թթ.), Երևան, 1999:
46. Նասիբյան Ա., Բրիտանիան և Հայկական հարցը 1915-1923 թթ., Բեյրութ, 1994:
47. Պետրոսյան Ե., Հայ եկեղեցու պատմություն, մաս Ա, Ս.Էջմիածին, 1998:
48. Պողոսյան Հ. Մ., Զեյթունի պատմությունը, Երևան, 1969:
49. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը, Երևան, 2000:
50. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք 1-2, Երևան, 1996:
51. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:
52. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:
53. Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Եր., 2002:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ <<ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

(6-9-**րդ դասարաններ**)

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Հանրակրթական հիմնական դպրոցի <<Հայոց պատմություն>> առարկայի VI-IX դասարանների ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով <<Կրթության մասին>> և <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքները, Հանրակրթության պետական չափորոշչի և հանրակրթական հիմնական դպրոցի <<Հայոց պատմություն>> առարկայի չափորոշչի հայեցակարգային դրույթները, սկզբունքներն ու պահանջները:

Հանրակրթական դպրոցի VI-IX դասարանների <<Հայոց պատմություն>> առարկան ընդգրկում է Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունն ամբողջականորեն՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Մեր ժողովրդի անցած պատմական ուղու համակարգված և հանրամատչելի շարադրանքը սովորողներին կծանոթացնի հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթության հետ, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի ունեցած դժվարություններին ու կորուստներին:

Հայաստանը հին ժամանակներից սկսած եղել է եվրոպական և արևելյան քաղաքակրթությունների շփման, փոխհաղորդակցության և փոխազդեցության կենտրոնում: Շփվելով տարբեր մշակույթների հետ, կրելով նրանց որոշակի ազդեցությունը՝ հայ ժողովուրդը, սակայն, պահպանել ու զարգացրել է ինքնատիպ քաղաքակրթություն, որի շնորհիվ, հազարամյակներ կտրելով, հասել է մարդկության պատմության նորագույն փուլին և շարունակում է իր պատմական ընթացքը:

Հայոց պատմության յուրահատուկ գծերից է նաև ազատության և անկախության պահպանման կամ վերականգնման համար մղված դարավոր պայքարը: Եվ օրինաչափ է, որ ներկայացված ծրագրում մեծ տեղ են զբաղեցնում Հայոց պատմության հերոսական էջերը, ազգային-ազատագրական պայքարի նախորդ և նորագույն փուլերը: Անտարակույս, Հայաստանի՝ Հայոց հայրենիքի ազատագրության համար պայքարը մեր ժողովրդի պատմության մշտական ուղեկիցն է, նրա գոյության ձևերից մեկը:

Պատմական հարուստ ժառանգության իմացությունն ու յուրացումը ամեն մի հայի, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր ապագա քաղաքացու պարտականությունն է: Այդ խնդրի հաջող լուծման գործում մեծ կարևորություն ունի ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը <<Հայոց պատմություն>> առարկայի լրամշակված ծրագրի և նոր դասագրքերի հիման վրա:

<<Հայոց պատմություն>> առարկայի բովանդակությունը ըստ դասարանների ժամանակագրությամբ բաշխվել է հետևյալ կերպ.

VI դասարան – հնագույն ժամանակներից մինչև III դարի վերջը,

VII դասարան – IV դարի սկզբից մինչև XVII դարի կեսերը,

VIII դասարան – XVII դարի երկրորդ կեսից մինչև 1918 թ. մայիսը,

IX դասարան – 1918 թ. մայիսից մինչև մեր օրերը:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար ծրագրով հատկացվում է 51 դասաժամ, VI-IX դասարանների համար ընդամենը՝ 204 դասաժամ: Ընդ որում՝ կրկնությանը և ամփոփմանը հատկացված ժամերը բաժնի կամ թեմայի ժամաքանակի մեջ չեն մտնում:

<<ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>>

ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԻՆ ՇՐՋԱՆ

(VI **դասարան**, **տարեկան** 51 **ժամ**)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 **ժամ**)

<<Հայոց պատմություն>> առարկայի բովանդակությունը, պարբերացումը: Հնագույն և հին շրջանների պատմության առանձնահատկությունները:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ (8 **ժամ**)

Հայոց հայրենիքը: (3 **ժամ**)

Հայկական լեռնաշխարհը՝ հայերի հայրենիք: Հայկական լեռնաշխարհի դիրքը, սահմանները, գետերը, լճերը: Հայաստանի պատմավարչական բաժանումը:

Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության հնագույն բնօրրան: (3 **ժամ**)

Նախնադարի պարբերացումը: Հայաստանի տարածքի նախնադարյան բնակատեղիները (Գուգարք, Պորտաբլուր, Շենգավիթ, Լճաշեն): Նախնադարյան հասարակության զարգացումը (տոհմ, ցեղ, ցեղային միություններ): Նախնադարյան մարդկանց նյութական և հոգևոր ձեռքբերումները (կրակի օգտագործումը, աշխատանքային գործիքների կատարելագործումը, արվեստ, կրոնական պատկերացումներ): Նախնադարյան հասարակության անկումը:

Կրկնություն (1 **ժամ**)

Վաղ պետական կազմավորումները Հայաստանի տարածքում: (2 **ժամ**)

Հայաստանը հնդեվրոպական նախահայրենիք: Վաղ պետական կազմավորումների առաջացումը. Արատտա, Հայասա, Հայկյաններ:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (32 **ժամ**)

Վանի համահայկական թագավորությունը: (5 **ժամ**)

Վանի թագավորության հիմնադրումը Ք.ա. IX դարում: Տուշպա-Վանը՝ մայրաքաղաք: Վանի թագավորության հզորացումը (Մենուա, Արգիշտի I, Սարդուրի II): Թագավորության պայքարն արտաքին ուժերի դեմ: Թագավորության անկումը:

Կրկնություն (1 **ժամ**)

Ամփոփիչ կրկնություն (1 ժամ)

***Հայկազունի Երվանդականների թագավորությունը**: (4 **ժամ**)*

Պարույր Նահապետը՝ Հայոց թագավոր: Երվանդ I Սակավակյաց: Տիգրան I Երվանդյան: Ք.ա. 522-521 թթ. հակապարսկական ապստամբությունը: Հայաստանը Աքեմենյան տերության կազմում:

Երվանդական թագավորության վերականգնումը. Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանը: Հայկական թագավորությունները Ք.ա III դարում: Հայկական թագավորությունները և Սելևկյանները:

***Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորությունը**: (2 **ժամ**)*

Հայկական թագավորությունների անկախացումը: Արտաշես I-ը և հայկական հողերի միավորումը: Արտաշես I-ի բարենորոգումները:

Կրկնություն (1 **ժամ**)

Հայաստանը՝ աշխարհակալ տերություն: (7 **ժամ**)

Տիգրան II-ի գահակալումը: Ծոփքի միացումը Մեծ Հայքին: Տիգրան II Մեծի նվաճումները: Տերության տարածքը և բնակչությունը: Հայ-հռոմեական պատերազմը (Տիգրանակերտի և Արածանիի ճակատամարտերը): Արտաշատի հաշտության պայմանագիրը:

Մեծ Հայքի թագավորությունն Արտավազդ II-ի օրոք: Կրասոսի և Անտոնիոսի արշավանքները: Արտաշես II: Արտաշեսյան վերջին գահակալները:

Կրկնություն (1 **ժամ**)

***Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը** (I-III **դարեր**):* (5 **ժամ**)

Արշակունյաց արքայատոհմի հաստատումը Հայաստանում (Հայաստանի դրածո թագավորները, Տրդատ I-ի գահակալումը և գործունեությունը):

Վաղարշ I, Վաղարշապատ մայրաքաղաքի կառուցումը: Վաղարշ II-ը և Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը: Սասանյան հեղաշրջումը Պարսկաստանում և հայ-պարսկական հարաբերությունները:

Տրդատ III Մեծ: Մծբինի 40-ամյա հաշտությունը:

***Հին Հայաստանի պետական կարգը, տնտեսությունը և սոցիալական կառուցվածքը**:* (4 **ժամ**)

Պետական կարգը: Տնտեսությունը (գյուղատնտեսություն, արհեստներ, ներքին և արտաքին առևտուր): Բնակչությունը, քաղաքները, գյուղական համայնքը:

Կրկնություն (1 **ժամ**)

***Հին Հայաստանի մշակույթը**: (6 **ժամ**)*

Հայկական մշակույթի ակունքները: Առասպելները և վիպերգերը: Դիցարանը: Գիրը: Գիտությունը: Արվեստը, ճարտարապետությունը:

Կրկնություն (1 **ժամ**)

Ամփոփիչ կրկնություն (2 ժամ)

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

(VII **դասարան**, **տարեկան**՝ 51 **ժամ**)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 **ժամ**)

Հայոց պատմության միջնադարյան շրջանի բովանդակությունը, առանձնահատկությունները:

ԲԱԺԻՆ 1. **ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ** (18 **ժամ**)

Ավատատիրության հաստատումը Հայաստանում: (2 **ժամ**)

Ավատատիրություն ձևավորումը, աստիճանակարգությունը: Ազատների և անազատների դասերը: Պետական կառավարման համակարգը:

Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն: (1 **ժամ**)

Քաղաքական կացությունը Առաջավոր Ասիայում: Տրդատ III Մեծ և Գրիգոր Լուսավորիչ: Քրիստոնեությունը Հայաստանի պետական կրոն:

Պայքար թագավորական իշխանության ամրապնդման համար: (4 **ժամ**)

Թագավորական իշխանության ամրապնդման քաղաքականությունը: Խոսրով Կոտակ, Արշակ II, Պապ թագավոր:

Մեծ Հայքի թագավորության թուլացումը: Խոսրով IV, Վռամշապուհ: Թագավորության անկումը:

Կրկնություն (1 **ժամ**)

Ազատագրական շարժումները V դարում: (3 **ժամ**)

Պարսից քաղաքականությունը Հայաստանում: Վարդանանց պատերազմը. Ավարայրի ճակատամարտը: Վահանանց ապստամբությունը. Ակոռիի և Ներսեհապատի ճակատամարտերը: Նվարսակի պայմանագիրը:

Հայաստանը VI-IX դարերում: (4 **ժամ**)

Արևմտյան Հայաստանը VI դարում, հակաբյուզանդական ելույթները և ապստամբությունները: Արևելյան Հայաստանը VI դարում, 571 – 572 թթ. ապստամբությունը: Պարսկա - բյուզանդական պատերազմը և Հայաստանը:

Արաբական արշավանքները և Հայաստանը: Թեոդորոս Ռշտունին և հայ-արաբական պայմանագիրը: Հայաստանը Արաբական խալիֆայության կազմում: Հակաարաբական ապստամբությունները (703 թ., 774-775 թթ., 850-855 թթ.):

Հայկական մշակույթը V-IX դարերում: (4 **ժամ**)

Մեսրոպ Մաշտոցը և հայոց այբուբենի ստեղծումը: Դպրոցը: Պատմագրությունը: Փիլիսոփայությունը: Բնական գիտությունները: Գրականությունը: Արվեստը, ճարտարապետությունը:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 2. **ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ** (20 **ժամ**)

Հայաստանի Բագրատունյաց թագավորությունը: (6 **ժամ**)

Հայաստանի անկախության վերականգնումը. Աշոտ I: Սմբատ I: Երկրի անկախության ամրապնդումը և հզորացումը. Աշոտ II Երկաթ, Աշոտ III Ողորմած, Գագիկ I: Անիի թագավորության թուլացումը: Գագիկ II, թագավորության անկումը: Վասպուրականի, Կարսի, Սյունիքի և Լոռու թագավորությունները:

Բագրատունյաց թագավորության տնտեսության վերելքը: Պետական կառավարման համակարգը:

Հայ ժողովրդի պայքարը օտարերկրյա զավթիչների դեմ: Զաքարյաններ: (3 **ժամ**)

Սելջուկ-թյուրքերը և Հայաստանը: Հայկական թագավորությունները և իշխանությունները: Հայաստանը Զաքարյանների օրոք:

Հայաստանը և մոնղոլները: Պայքար հայկական պետականության վերականգնման համար: Հայաստանի քաղաքական իրավիճակը XIV դարում:

Կրկնություն (1 **ժամ**)
Ամփոփում (1 **ժամ**)

Կիլիկյան Հայաստան: (5 **ժամ**)

Հայերը Կիլիկիայում: Ռուբինյան իշխանության առաջացումը և ամրապնդումը: Թագավորության հռչակումը: Լևոն I արքայի ներքին և արտաքին քաղաքականությունը:

Հեթումյան արքայատոհմի հաստատումը. Հեթում I: Հայ-մոնղոլական և հայ-մամլուքյան հարաբերությունները: Կենտրոնական թագավորության թուլացումն ու անկումը:

Կիլիկյան Հայաստանի տնտեսությունը: Քաղաքները և քաղաքային կյանքը: Պետական կառավարման համակարգը:

Հայկական մշակույթը *X - XIV* ***դարերում***: (6 **ժամ**)

Հայ մշակույթի վերածննդի նախադրյալները: Կրթական գործը (Գլաձորի և Տաթևի համալսարաններ): Պատմագրությունը: Իրավագիտությունը: Բնագիտությունը: Գրականությունը: Արվեստը (մանրանկարչություն, որմնանկարչություն, քանդակագործություն, խաչքարագործություն, երաժշտություն), ճարտարապետությունը:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (5 **ժամ**)

Հայաստանը *XV* ***դարից մինչև*** *XVII* ***դարի կեսերը:*** (3 **ժամ**)

Հայաստանի քաղաքական իրավիճակը XV դարում: Կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Էջմիածնում: Կ.Պոլսի Հայոց պատրիարքության ստեղծումը:

Թուրք-պարսկական պատերազմները և Հայաստանը: Շահ Աբասը և հայերի բռնագաղթը: 1639 թ. Կասրե-Շիրինի հաշտության պայմանագիրը:

Հայկական իշխանությունները ուշ միջնադարում: Հայաստանի ազատագրության համար պայքարը:

Հայկական մշակույթը *(XV* ***դար*** *- XVII* ***դարի առաջին կես****):* (2 **ժամ**)

Հայկական մշակույթի զարգացման պայմանները: Դպրոցը: Տպագրությունը. Հակոբ Մեղապարտ: Գիտությունը: Արվեստը:

Կրկնություն (1 **ժամ**)
Ամփոփում (1 **ժամ**)

ՆՈՐ ՇՐՋԱՆ

(VIII **դասարան**, **տարեկան** 51 **ժամ**)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 **ժամ**)

Հայոց պատմության նոր շրջանի բովանդակությունը, առանձնահատկությունները:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ

(12 **ժամ**)

Ազատագրական պայքարի նոր փուլը *XVII* ***դարի երկրորդ կեսին և*** *XVIII* ***դարում***: (5 **ժամ**)

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի վերելքի նախադրյալները: Էջմիածնի 1677թ. ժողովը: Իսրայել Օրին և նրա գործունեությունը:

Ազատագրական պայքարի սկիզբն Արցախում: Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանությունը: Ազատագրական շարժման ծավալումն Արցախում:

Ազատագրական պայքարի սկիզբը Սյունիքում: Դավիթ Բեկ: Հալիձորի պաշտպանությունը: Մխիթար Սպարապետ: Արցախի և Սյունիքի զինված պայքարի արդյունքները: Հայկական ինքնավարությունն Արցախում (Խամսայի մելիքություններ):

Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոնները: Հովսեփ Էմինը և նրա գործունեությունը: Մադրասի հայրենասիրական խմբակը: Հայաստանի ազատագրության ծրագրերը (Հովսեփ Արղության, Շահամիր Շահամիրյան):

Կրկնություն (1 **ժամ**)

Արևելյան Հայաստանը *XIX* ***դարի առաջին կեսին***: (3 **ժամ**)

Քաղաքական կացությունն Անդրկովկասում: 1804 - 1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը, Գյուլիստանի հաշտության պայմանագիրը:

1826 - 1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը: Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը. պարսկահայերի վերաբնակեցումը:

Հայկական մարզը: 1836 թ. եկեղեցական կանոնադրությունը:

Արևմտյան Հայաստանը *XIX* ***դարի առաջին կեսին***: (1 **ժամ**)

1806 - 1812 թթ. ռուս-թուրքական պատերազմը: 1828 - 1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Ադրիանապոլսի պայմանագիրը, արևմտահայերի վերաբնակեցումը:

Մշակույթը *XVII* ***դարի երկրորդ կեսից մինչև*** *XIX* ***դարի առաջին կեսը***: (3 **ժամ**)

Հայկական մշակույթի զարգացման պայմանները և կենտրոնները: Դպրոցները: Տպագրությունը: Հայ պարբերական մամուլի սկզբնավորումը. <<Ազդարար>>:

Գիտությունը: Վենետիկի Մխիթարյան միաբանությունը: Արվեստը:

Կրկնություն (1 **ժամ**)

Ամփոփիչ կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ (27 **ժամ**)

Հայաստանը Ռուսական և Օսմանյան կայսրությունների կազմում: (2 **ժամ**)

Բարենորոգումներն Արևելյան Հայաստանում: Արդյունաբերության և ճանապարհաշինության զարգացումը: Ռուսական ինքնակալության ազգային և գաղութային քաղաքականությունը Արևելյան Հայաստանում:

Արևմտյան Հայաստանի սոցիալ - տնտեսական վիճակը և վարչական բաժանումը:

Ազգային-հասարակական շարժումները: (2 **ժամ**)

Հայ հասարակական - քաղաքական միտքը: Սահմանադրական շարժումը: Զեյթունի 1862 թ. ապստամբությունը:

1877 - 1878 ***թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցի միջազգայնացումը***: (2 **ժամ**)

1877 - 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայերը (Մ. Լոռիս-Մելիքով, Հ. Լազարև և ուրիշներ): Սան Ստեֆանոյի պայմանագիրը և Հայկական հարցը: Բեռլինի վեհաժողովը և Հայկական հարցի միջազգայնացումը:

Ազգային-ազատագրական պայքարը XIX **դ.** *70 - 90-****ական թթ.***: (5 **ժամ**)

Ազատագրական խմբակները և կազմակերպությունները: Հայ ազգային կուսակցությունները (Արմենական, Հնչակյան, Դաշնակցություն): Հայդուկային շարժման առաջացումը և ծավալումը:

Արևմտահայության կոտորածները 1890-ական թթ., Հայոց ցեղասպանության սկիզբը: Հայերի ինքնապաշտպանական մարտերը:

Կրկնություն (1 **ժամ**)

Ազատագրական շարժումների ծավալումը XX **դարի սկզբին**: (3 **ժամ**)

Առաքելոց վանքի կռիվը: 1904 թ. Սասունի ապստամբությունը: Հայդուկային շարժման անկումը:

Ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության նոր դրսևորումը. 1903 թ. հունիսի 12-ի հրամանագիրը: Հայ-թաթարական կռիվները, հայերի ինքնապաշտպանության կազմակերպումը:

Հակահամիդյան շարժումը: Երիտթուրքերի 1908 թ. պետական հեղաշրջումը: Կիլիկիահայության կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը:

Հայկական հարցը 1912 - 1914 թթ.:

Հայ ժողովուրդն Առաջին աշխարհամարտի տարիներին: (8 **ժամ**)

Հայաստանը և պատերազմող տերությունների ռազմաքաղաքական պլանները: Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատը: Հայ կամավորական շարժումը:

Հայոց Մեծ եղեռնը: <<Ցեղասպանություն>> հասկացությունը: Հայերի ցեղասպանության երիտթուրքական ծրագիրը և դրա իրագործումը: Մեծ եղեռնի հետևանքները, դասերը:

Ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թվականին. Վան, Շապին Գարահիսար, Մուսա լեռ, Ուրֆա (Ուռհա): Ինքնապաշտպանական մարտերի նշանակությունը:

Կրկնություն (1 **ժամ**)

Հայաստանը 1917 թ. ռուսաստանյան հեղափոխությունների շրջանում: Ցարիզմի տապալումը և նոր իշխանության մարմինների ստեղծումը: Ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը:

Արևմտահայերի և արևելահայերի առաջին համագումարները: Հոկտեմբերյան հեղափոխությունը և սահմանների հարցը Անդրկովկասում:

Երզնկայի զինադադարը: Հայկական զորամիավորումների ստեղծումը: Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը, Բրեստ-Լիտովսկի հաշտությունը և հայկական տարածքների հանձնումը Թուրքիային:

Պատերազմի վերսկսումը Կովկասյան ճակատում, թուրքերի ներխուժումը Հայաստան և Անդրկովկաս: Հայկական զորքի դիմադրությունը: Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը: Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը:

Հայկական մշակույթը *XIX* ***դարի երկրորդ կեսին և*** *XX* ***դարի սկզբին***: (5 **ժամ**)

Մշակույթի զարգացման նախադրյալները: Դպրոցը (Գևորգյան ճեմարանը և այլն): Գիտությունը: Մամուլը, գրականությունը: Արվեստը:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ (2 **ժամ**)

Գաղթավայրերի առաջացումը, հիմնական կենտրոնները: Գաղթավայրերի դերը հայապահպանության և ազգային մշակույթի զարգացման գործում:

Կրկնություն (1 **ժամ**)
Ամփոփիչ կրկնություն (2 **ժամ**)

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ
(IX **դասարան**, **տարեկան**՝ 51 **ժամ**)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 **ժամ**)

Հայոց պատմության նորագույն շրջանի բովանդակությունը, առանձնահատկությունները:

ԲԱԺԻՆ 1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ**
(1918 **թ**. **մայիսի** 28 – 1920 **թ**. **դեկտեմբերի** 2) (9 **ժամ**)

Հանրապետության կայացումը: (2 **ժամ**)

Հայաստանի Հանրապետության հռչակումը: Բաթումի պայմանագիրը: Իշխանության մարմինների և ազգային բանակի ստեղծումը: Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները: Հայկական անկախ պետականության վերականգնման պատմական նշանակությունը:

Սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը: (3 **ժամ**)

Սոցիալ-տնտեսական դրությունը և տնտեսության վերականգնմանն ուղղված միջոցառումները: Քաղաքական կյանքը. կուսակցությունները: Թուրք-թաթարական խռովությունները, դրանց ճնշումը: 1920 թ. Մայիսյան ապստամբությունը և դրա հետևանքները:

Մշակութային կյանքը. Հայաստանի համալսարանի հիմնադրումը, գիտության և մշակույթի գործիչների վերադարձը Հայաստան:

Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը *1918 - 1920* ***թթ***.: ***Հայկական հարցը***: (3 **ժամ**)

Հանրապետության հարաբերությունները Քառյակ միության հետ: Հայ-վրացական հարաբերությունները: Հայ-ադրբեջանական հարաբերությունները: Հայ–ռուսական հարաբերությունները: Թիֆլիսի համաձայնագիրը: Արևելքի ժողովուրդների համագումարը:

Փարիզի խաղաղության խորհրդաժողովը և Հայկական հարցը: Անկախ և Միացյալ Հայաստանի հռչակումը ՀՀ խորհրդարանի կողմից: Հայկական հարցը Սան Ռեմոյի խորհրդաժողովում: Սևրի պայմանագիրը: Կիլիկիահայությունը 1918 – 1921 թթ:

Հայաստանի Հանրապետության անկումը: (1 **ժամ**)

Քեմալական շարժումը և Հայաստանը: 1920 թ. թուրք–հայկական պատերազմը: Հայաստանի խորհրդայնացումը. 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 2. **ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ**
1920 - 1945 **ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ** (12 **ժամ**)

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը *1920 – 1922* ***թթ***.: (2 **ժամ**)

Խորհրդային վարչակարգի հաստատումը, <<Ռազմական կոմունիզմ>>-ի քաղաքականությունը: Փետրվարյան համաժողովրդական ապստամբությունը:

Հայաստանի առաջին Սահմանադրությունը: Անդրկովկասի խորհրդային դաշնային հանրապետության և ԽՍՀՄ-ի ստեղծումը:

Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները *(1920 - 1922* ***թթ***.): (2 **ժամ**)

1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերը: Նախիջևանի հիմնախնդիրը: Զանգեզուրի հերոսամարտը (1920 թ. վերջ – 1921 թ. հուլիս): Գարեգին Նժդեհ: <<Լոռու չեզոք գոտու>>, Ջավախքի, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրները:

Սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքը Խորհրդային Հայաստանում *1922 - 1941* ***թթ.:*** (2 **ժամ**)

Անցումը Նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ), տնտեսության վերականգնումը: ՀՍԽՀ ինդուստրացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը:

Քաղաքական բռնությունները և հալածանքները: Կոմունիստական ամբողջատիրության հաստատումը, անհատի պաշտամունքը: Խորհրդային Հայաստանը՝ միութենական հանրապետություն, ՀԽՍՀ նոր Սահմանադրությունը:

Հայկական Սփյուռքի ձևավորումը: (1 **ժամ**)

Սփյուռքի առաջացումը: Հայկական հարցը Լոնդոնի 1921 թ. և Լոզանի 1922 – 1923 թթ. խորհրդաժողովներում: <<Հայկական օջախի>> և հայ գաղթականության խնդիրը Ազգերի լիգայում, Ֆ. Նանսեն: Հայրենադարձությունը 1920 - 1936 թթ.:

Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին: (2 **ժամ**)

Պատերազմի սկիզբը: Հայկական ազգային դիվիզիաների կազմավորումը և նրանց մարտական ուղին: Սփյուռքահայերի մասնակցությունը ֆաշիզմի ջախջախմանը: Հայերի մասնակցությունը պարտիզանական պայքարին: Խորհրդային Միության հայ հերոսները և զորավարները:

Խորհրդային Հայաստանի մշակույթը *(1920 – 1945* ***թթ.):*** (3 **ժամ**)

Խորհրդային իշխանության քաղաքականությունը մշակույթի բնագավառում: Կրթական համակարգի ձևավորումը: ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիմնադրումը և ՀԽՍՀ ԳԱ ստեղծումը: Բնական գիտությունները: Հայագիտությունը:

Գրականությունը: Թատրոնը, կինոարվեստը, կերպարվեստը, երաժշտությունը: Քաղաքաշինությունը և ճարտարապետությունը:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 3. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1945 - 1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (10 **ժամ**)

Հայկական Սփյուռքը հետպատերազմյան շրջանում: (2 **ժամ**)

Հայկական հարցի վերաբացումը միջազգային նոր պայմաններում: <<Մեծ հայրենադարձության>> կազմակերպումը (1946 – 1948 թթ.): Սփյուռքահայերի պայքարը Հայկական հարցի լուծման և ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Հայրենիք - Սփյուռք կապերի բարելավումը և ամրապնդումը:

Տնտեսությունը, հասարակական-քաղաքական կյանքը: (2 **ժամ**)

Արդյունաբերության վերակառուցումը և զարգացումը: Գյուղատնտեսության հիմնախնդիրները: Բնակչության սոցիալական վիճակը:

Քաղաքական բռնությունների նոր փուլը: 1949 թ. զանգվածային աքսորը: ՀԽՍՀ-ն <<ձնհալի>> տարիներին: Ազգային զարթոնքը: Խորհրդային Հայաստանը <<լճացման տարիներին>>:

Արցախյան շարժումը: (2 **ժամ**)

Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը: Արցախյան շարժման սկզբնավորումը: ՀԽՍՀ և ԽՍՀՄ ղեկավարության դիրքորոշումը: Սումգայիթյան ողբերգությունը: Հայերի բռնագաղթն Ադրբեջանից: 1988 թ. դեկեմբերի 7-ի երկրաշարժը:

Համազգային շարժման ծավալումը:Հայկական ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը: Ազատագրական պայքարի զինված փուլը: ԼՂՀ անկախության հռչակումը (1991 թ. սեպտեմբերի 2):

Հայաստանի Հանրապետության անկախության գործընթացը: (1 **ժամ**)

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990 թ. մայիսի 20-ի ընտրությունները: Հայաստանի անկախության մասին 1990 թ. օգոստոսի 23-ի հռչակագիրը: ԽՍՀՄ - ի փլուզումը, ԱՊՀ - ի ստեղծումը:

Խորհրդային Հայաստանի և Հայկական սփյուռքի մշակույթը *1945 - 1991 թթ:* (3 **ժամ**)

Կրթական համակարգը: Գիտությունը: Գրականությունը: Արվեստը. երաժշտությունը, թատրոնը, կինոն, կերպարվեստը: Ճարտարապետությունը:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1991 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ (8 **ժամ**)

Հայաստանի Հանրապետության ամրապնդման գործընթացը: (1 **ժամ**)

1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեն, ՀՀ անկախության հռչակումը: Իշխանության մարմինների ձևավորումը: Բանակը: Հանրապետության խորհրդանիշները: ՀՀ սահմանադրությունը:

ՀՀ տնտեսական դրությունը, հասարակական-քաղաքական կյանքը: (2 **ժամ**)

Տնտեսական քաղաքականությունը: Բազմակուսակցական համակարգի ձևավորումը: Հասարակական և բարեգործական կազմակերպությունները: Ներքաղաքական զարգացումները 1991 - 1998 թթ.: 1999 թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը: Ներքաղաքական կյանքը XXI դարի սկզբներին:Մշակութային կյանքը:

ՀՀ միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը: (1 **ժամ**)

Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը և դիվանագիտական կապերի հաստատումը: ՀՀ-ն ԱՊՀ-ի, ՄԱԿ-ի և Եվրախորհրդի անդամ: ՀՀ - Եվրամիություն հարաբերությունները: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: (2 **ժամ**)

1991 թ. դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեն: ԼՂՀ իշխանության մարմինների ստեղծումը, ԼՂՀ խորհրդանիշները: Ադրբեջանի ագրեսիան ԼՂՀ-ի դեմ: Հայկական ուժերի հակահարձակումը, Շուշիի և Լաչինի ազատագրումը: Պատերազմի հետագա ընթացքը, զինադադարի կնքումը (1994 թ. մայիս):

Լեռնային Ղարաբաղի հարցի միջազգայնացումը և Մինսկի խմբի գործունեությունը:

Հայկական Սփյուռքը *1991* ***թվականից մինչև մեր օրերը:*** (2 **ժամ**)

Զանգվածային արտագաղթը և Սփյուռքի ստվարացումը: Սփյուռքի հիմնական կենտրոնները: Նոր մոտեցումներ Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում:

Կրկնություն (1 **ժամ**)

Ամփոփիչ կրկնություն (1 **ժամ**)

ՆԱԽԱՔՆՆԱԿԱՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (6 **ժամ**)